

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ЭКОНОМИКА
JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
ECONOMICS

№ 2 (41)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2023

«Բանբեր Երևանի համալսարանի. Տնտեսագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2020 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал «Вестник Ереванского университета. Экономика» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета»

Three issues of “Journal of Yerevan University. Economics” are published annually. The journal has been published since 2010. It is the successor of “Journal of Yerevan University” published in 1967-2009

Խմբագրական խորհուրդ.

Գլխավոր խմբագիր՝ **Խաչատրյան Կառլեն** (in.գ.թ., դոց.)

Առաքելյան Արամ (in.գ.թ., պրոֆ.), **Ասրիյան Վլադիմիր** (in.գ.թ., պրոֆ., Իսպանիա), **Բերբերոցլու Պերժ** (in.գ.թ., պրոֆ., ԱՄՆ), **Բոստանջյան Վարդան** (in.գ.թ., պրոֆ.), **Գալստյան Գաղիկ** (in.գ.թ., պրոֆ.), **Գևորգյան Ռուբեն** (in.գ.թ., պրոֆ.), **Մարկոսյան Աշոտ** (in.գ.թ., պրոֆ.), **Յաղգարով Յակով** (in.գ.թ., պրոֆ., ՌԴ), **Ջրբաշյան Վահագն** (in.գ.թ., դոց., Իսպանիա), **Սարգսյան Հայկ** (in.գ.թ., պրոֆ.), **Սիդորով Վիկտոր** (in.գ.թ., պրոֆ., ՌԴ), **Քալենջյան Սերգեյ** (in.գ.թ., պրոֆ., ՌԴ)

Редакционная коллегия:

Главный редактор: **Хачатрян Карлен** (к.э.н., доц.),

Аракелян Арам (д.техн.н., проф.), **Асриян Владимир** (к.э.н., проф., Испания), **Бербероглу Перч** (д.э.н., проф., США), **Бостанджян Вардан** (д.э.н., проф.), **Галстян Гагик** (к.э.н., проф.), **Геворгян Рубен** (д.э.н., проф.), **Джрбашян Ваагн** (к.э.н., доц., Испания), **Календжян Сергей** (д.э.н., проф., РФ), **Маркосян Ашот** (д.э.н., проф.), **Саргсян Гайк** (д.э.н., проф.), **Сидоров Виктор** (д.э.н., проф., РФ), **Ядгаров Яков** (д.э.н., проф., РФ)

Editorial Board:

Editor-in-chief: **Khachatryan Karlen** (Ph.D. in Economics, Associate Professor),

Arakelyan Aram (Sc. D. in Teknics, Professor), **Asriyan Vladimir** (Ph.D. in Economics, Professor, Spain), **Berberoglu Perj** (Sc. D. in Economics, Professor, USA), **Bostanjyan Vardan** (Sc. D. in Economics, Professor), **Galstyan Gagik** (Ph.D. in Economics, Professor), **Gevorgyan Ruben** (Sc. D. in Economics, Professor), **Jrbashyan Vahagn** (Ph.D. in Economics, Associate Professor, Spain), **Markosyan Ashot** (Sc. D. in Economics, Professor), **Qalenjyan Sergey** (Sc. D. in Economics, Professor, RF), **Sargsyan Hayk** (Sc. D. in Economics, Professor), **Sidorov Viktor** (Sc. D. in Economics, Professor, RF), **Yadgarov Yakov** (Sc. D. in Economics, Professor, RF)

**ԱՐՏԱՊՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԻԶՆԵՍԻ ԴԻՆԱՄԻԿՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ . ԴՐԱՆՑ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻՎՐԱ**

ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

*Արտադրողականությունը ամեն ինչ չէ, սակայն երկարաժամկետ
հատվածում այն վերածվում է գրեթե ամեն ինչի:
Փոլ Քրուզման*

Արտադրողականության շարունակական աճը կայուն տնտեսական աճի ու հասարակական բարեկեցության բարձրացման կարևոր նախապայման է: Այս համատեքստում շատ կարևոր են արտադրողականության բարձրացման գործոնային փոխազդեցությունների վեր հանումն ու խնդիրների բացահայտումը:

Հոդվածում առանձնահատուկ քննարկվել է գործարար միջավայրի և բիզնեսի դինամիկության դերը՝ որպես մրցակցային բիզնես միջավայրի ապահովման և արտադրողականության աճի առանցքային գործոնային բաղադրիչ: Ըստ «Գլոբալ մրցունակության» զեկույցի՝ աշխարհում վերջին տասնամյակների ընթացքում շուկաների կառուցվածքը փոխվել է, իսկ բիզնեսի դինամիկությունը դրսևորում է նվազման միտումներ: Թեև ՀՀ-ում 2018-2019 թթ. դրսևորվել է բիզնեսի դինամիկության որոշակի բարելավում, այնուամենայնիվ այն բավականին ցածր է նույնիսկ տարածաշրջանային երկրների համեմատ:

ՀՀ-ում 2000 թ. սկսված աշխատանքի արտադրողականության աճի դանդաղման միտումները (աճի միջին տեմպը՝ 5.5%) 2020 թ. տնտեսական ցնցումների հետևանքով էլ՝ ավելի են խորացել. աճի միջին տեմպը 2020 թ. 2019-ի նկատմամբ կազմել է 0.95%, իսկ 2021 թ.-ին՝ 2020 թ. նկատմամբ՝ մինչև 1.1%: Տնտեսությունում ստեղծված ավելացված արժեքի բաշխման ոչ արդյունավետ մեխանիզմների պայմաններում աշխատողներին վճարվում է հավասարակշիռ գնից ցածր աշխատավարձ, իսկ ապրանքներն ու ծառայությունները նրանք գնում են հավասարակշիռ գնից բարձր գնով: Սա շատ մտահոգիչ խնդիր է աշխարհում, հատկապես զարգացող երկրներում (այդ թվում՝ Հայաստանում), արտադրական գործոնների մասնակիցների միջև ավելացված արժեքի բաշխման մեխանիզմի աղճատվածության (եկամուտների ոչ հավասարաչափ բաշխման առումով) և սոցիալական աճող բևեռացվածության ու կենսամակարդակի անկման արդի պայմաններում: Այստեղ բացառիկ կարևորություն է ստանում համախառն գործոնային արտադրողականությունը՝ որպես արտադրական գործոնների մասնակիցների միջև ավելացված արժեքի բաշխման արդյունավետության ցուցիչ:

Տնտեսական աճ–արտադրողականություն փոխազդեցությունների խորքային գնահատման համար կարևոր է ՀՆԱ-ի և արտադրողականության ցուցանիշների՝ ՀԳԱ-ի, աշխատանքի արտադրողականության, ինչպես նաև իրական աշխատավարձի աճի տեմպերի դիտարկումը դրանց փոխկապակցվածության ներքո: Նման մոտեցումը հնարավորություն կտա կենտրոնանալու արտադրողականություն - տնտեսական աճ փոխազդեցությունների խորքային խնդիրների վրա, որոնց լուծումը կարևոր է ՀՀ տնտեսական զարգացման և հասարակական բարեկեցության բարձրացման հրամայականի արդի պայմաններում:

Բանալի բառեր – արտադրողականություն, գործարար միջավայր, բիզնեսի դինամիկություն, համախառն գործոնային արտադրողականություն, աշխատանքի արտադրողականություն, արտադրողականություն - տնտեսական աճ փոխազդեցություններ, տնտեսական զարգացում

Ներածություն

Վերջին շրջանում բավական ակտիվացել են քննարկումները արտադրողականության աճի և տնտեսական զարգացման միջև կապի ու այդ համատեքստում արտադրողականության և բիզնես միջավայրի բարելավման ու տնտեսական վերափոխման փոխազդեցությունների վերաբերյալ:

Արտադրողականությունը անմիջականորեն փոխկապակցված է տնտեսական մի շարք ցուցանիշների հետ, որոնց միջև կապը ուսումնասիրելու միջոցով հնարավոր կլինի բացահայտել արտադրողականության դերը ողջ տնտեսության մասշտաբով: Ի տարբերություն համախառն ներքին արդյունքի, համախառն ազգային եկամտի և մակրոտնտեսական այլ ցուցանիշների, որոնք հիմնականում քանակական բնույթի են և արտահայտում են երկրի զարգացման մակարդակը տվյալ պահին՝ արտադրողականությունը որակական ցուցանիշ է և վերջին շրջանում ներառվում է երկրների զարգացման մակարդակն արտահայտող որակական գնահատականներում: Մասնավորապես, Գլոբալ մրցունակության զեկույցը¹, որը գնահատում է երկրների կարողությունները և ունակությունները բարեկեցության բարձր մակարդակ ապահովելու տեսանկյունից, հենքային է համարում բիզնեսի դինամիկությունը՝ որպես մրցակցային բիզնես միջավայրի առանցքային բնութագրիչ և արտադրողականության աճի լուրջ նախապայման: Համաշխարհային տնտեսական ֆորումի «Ներառական աճ և զարգացում» զեկույցում², աշխատանքի արտադրողականությանը զուգահեռ, դիտարկ-

¹ St' u Global Competitiveness Report, Special Edition, IMF, World Economic Forum, 2020, How Countries are Performing on the Road to Recovery, Appenix A – Transformation Readiness Framework: Methodology and Definitions, էջ 63-73:

² St' u The Inclusive Development Index 2018, IMF, World Economic Forum, 22 January 2018, էջ 7-14:

վում են համախառն գործոնային արտադրողականության և իրական աշխատավարձի ցուցանիշները, ինչը հնարավորություն է տալիս կենտրոնանալու ոչ թե ներառական զարգացման ինդեքսի մեջ արտադրողականության ցածր լինելու փաստի, այլ դրա պատճառների վրա: Այստեղ առանցքային նշանակություն ունեն տնտեսության արտադրողականությունն արտացոլող ցուցանիշները՝ համախառն գործոնային արտադրողականությունը, աշխատանքի արտադրողականությունը և իրական աշխատավարձը միաժամանակյա հաշվի առնելը՝ որպես տնտեսական աճի առավել ամբողջական և բազմակողմանի գնահատման որոշիչ գործոններ: Այս համատեքստում առանձնապես կարևոր է համախառն գործոնային արտադրողականության ցուցանիշը, որը բնութագրում է տնտեսությունում ստեղծված ավելացված արժեքի բաշխման մեխանիզմների արդյունավետությունը՝ եկամուտների հավասարաչափ բաշխման տեսանկյունից: Նման մոտեցումը խիստ արդիական է աշխարհում, հատկապես զարգացող երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, արտադրության գործոնների մասնակիցների միջև ավելացված արժեքի բաշխման մեխանիզմի աղճատվածության և սոցիալական աճող բևեռացվածության ու կենսամակարդակի անկման պայմաններում:

Սույն հետազոտության նպատակն է բացահայտել արտադրողականության բարձրացման գործոնային ազդեցությունները և դրանցից բխող հնարավոր լուծումները ՀՀ-ում:

1. Արտադրողականության էությունը և բովանդակային առանձնահատկությունները. ազդեցության դրսևորումները տնտեսությունում

Արտադրողականությունը թողարկման տրված ծավալին համարժեք արդյունք ստեղծելու համար ներդրված ռեսուրսների օգտագործման արդյունավետության չափն է: Առավել ընդհանրական ձևով այն արտահայտվում է ստեղծված արդյունքի և այդ նպատակով ներդրված ռեսուրսների հարաբերակցության միջոցով:


Երկարաժամկետ և կայուն տնտեսական աճ կարելի է ապահովել միայն արտադրողականության շարունակական աճի պայմաններում: Բարձր արտադրողականությունը նաև տնտեսության նորարարական զարգացման և մրցունակության բարձրացման լուրջ հիմք է: Արտադրողականությունն այս համատեքստում հանդես է գալիս որպես տնտեսական աճի կարևոր նախապայման:

Արտադրողականության տեսակները և դրանց բնութագրիչները

Արտադրողականությունը բազմակողմ ու բազմաշերտ երևույթ է և կարող է դիտարկվել ողջ տնտեսության, ճյուղի կամ ոլորտի, կազմակերպության կամ առանձին աշխատողի մակարդակով: Ըստ այդմ,

տարբերում են արտադրողականության երեք հիմնական տեսակներ, որոնք ունեն իրենց տարատեսակները (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1



1. Մասնակի գործոնային արտադրողականությունը հաշվի է առնում մեկ արտադրական գործոն (աշխատուժ, կապիտալ և այլն): Մասնավորապես, աշխատանքի արտադրողականությունը կարող է ցույց տալ մեկ աշխատողի կողմից ստեղծված ՀՆԱ-ի մեծությունը՝ տարվա կտրվածքով, միավոր աշխատանքի ներդրման դիմաց ստացվող արդյունքը³, միավոր ժամանակում միավոր աշխատանքային ծախսերին (մեկ աշխատողին կամ միավոր աշխատաժամանակին) բաժին ընկնող արտադրանքի թողարկման ծավալը⁴ և այլն:

2. Համախառն կամ ամբողջական գործոնային արտադրողականությունը (ՀԳԱ, TFP-Total Factor Productivity) աշխատուժի և ֆիզիկական ու բնական կապիտալի աճի հետ տնտեսական աճը բնութագրող հիմնական գործոնային ցուցանիշն է: Համախառն գործոնային արտադրողականությունը բնութագրում է տնտեսական աճի որակական կողմը՝ մարդկային կապիտալի, տեխնոլոգիական աճի, ինչպես նաև

³ Տե՛ս OECD Productivity Statistics: Methodological Notes, OECD, 2021, էջ 16: <https://www.oecd.org/sdd/productivity-stats/OECD-Productivity-Statistics-Methodological-note.pdf>

⁴ Տե՛ս ILOSTAT Database Description, Competitiveness Indicators, Labour Productivity, ILO, 2022: <https://ilostat.ilo.org/resources/concepts-and-definitions/description-labour-productivity>

մշակութային և ինստիտուցիոնալ գործոնների ազդեցության ձևով:

3. Ընդհանուր արտադրողականությունն ընդգրկում է այն բոլոր ռեսուրսները՝ աշխատանք, կապիտալ, հումք, էլեկտրաէներգիա և այլն, որոնք օգտագործվում են ապրանքների և ծառայությունների արտադրության մեջ:

Կախված աշխատանքի արտադրողականության գնահատման նպատակներից՝ կարող է ընտրվել այն ցուցանիշը, որն առավել համարժեք է ստեղծված իրավիճակին:

Արտադրողականությունը որպես տնտեսական աճի աղբյուր և տնտեսության շարժիչ ուժ

Բարձր արտադրողականությունը ներդրված ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման շնորհիվ ստեղծում է հավելյալ արդյունք թողարկման տրված ծավալի նկատմամբ և նպաստում տնտեսական աճին (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Բարձր արտադրողականությունը որպես տնտեսական աճի աղբյուր

| Արտադրողականության աճը | Բովանդակային դրսևորումները |
|---|--|
| 1. Արտադրողականության աճը հնարավորություն է տալիս ստեղծելու ավելի մեծ արդյունք ներդրված նույնածավալ ռեսուրսների պարագայում: | Որքան բարձր է արտադրողականությունը, այնքան ներդրված ռեսուրսներն օգտագործվում են ավելի արդյունավետ, այսինքն՝ դրանց յուրաքանչյուր միավորի դիմաց ստեղծվում է ավելի մեծ արդյունք: Հետևաբար, արտադրողականության աճն ապահովում է թողարկման ծավալի աճ անփոփոխ ներդրված ռեսուրսների պարագայում: |
| 2. Արտադրողականության աճի շնորհիվ խնայված ռեսուրսների օգտագործումը կարող է դառնալ լրացուցիչ աճի աղբյուր: | Արտադրողականության աճի արդյունքում թողարկման տրված ծավալի ստացման համար օգտագործվում են ավելի քիչ ռեսուրսներ: Խնայված ռեսուրսները կարող են ներդրվել նոր տեխնոլոգիական լուծումների, աշխատողների հմտությունների զարգացման և այլ ուղղություններով՝ նպաստելով արտադրողականության, հետևաբար նաև թողարկման ծավալի հետագա աճին: |

Արտադրողականության ազդեցությունը տնտեսության վրա ունենալով բազմակողմանի ու բազմաշերտ բնույթ՝ երկարաժամկետ հատվածում ողջ տնտեսության մակարդակով ապահովում է կուտակային արդյունք և կայուն տնտեսական աճ (տե՛ս աղյուսակ 2):

Արտադրողականության ազդեցության դրսևորումները տնտեսության վրա⁵

| Դրսևորման ուղղությունները | Ազդեցության ձևերը |
|--|--|
| Արտադրողականության աճը որպես տնտեսական աճի շարժիչ ուժ: | Աշխատանքի արտադրողականության աճը, նպաստելով տնտեսական ներուժի առավել արդյունավետ օգտագործմանը, հնարավորություն է տալիս միննույն ռեսուրսներով ընդլայնելու արտադրանքի թողարկման ծավալը, ստանալու ավելի բարձր եկամուտ՝ ստեղծելով ավելի մեծ ՀՆԱ: |
| Արտադրողականության աճը որպես տնտեսության նորարարական զարգացման և մրցունակության բարձրացման արդյունք և հնարավորություն: | Մի կողմից նորարարական տեխնոլոգիաները, մեթոդները և մոտեցումները թույլ են տալիս միննույն ռեսուրսներով ստեղծել ավելի մեծ արդյունք կամ միննույն արդյունքը ստեղծել ավելի փոքր քանակի ռեսուրսներով, հանգեցնում են աշխատանքի արտադրողականության բարձրացման, մյուս կողմից՝ այդ արտադրողականության աճի արդյունքում խնայված ռեսուրսները ներդրվելով նոր տեխնոլոգիական լուծումների, աշխատողների հմտությունների զարգացման և այլ ուղղություններով՝ ապահովում են արտադրողականության աճի նոր մակարդակ: |
| Արտադրողականությունը որպես բիզնեսի զարգացման շահութաբերության բարձրացման խթան: | Արտադրողականության կայուն աճը՝ ավելացնելով արտադրանքի ծավալը և նվազեցնելով արտադրության ծախսերը, բիզնեսին հնարավորություն է տալիս լինելու ավելի շահութաբեր: |
| Արտադրողականությունը նպաստում է աշխատատեղերի ստեղծմանը: | Որքան բարձր է աշխատանքի արտադրողականությունը, այնքան բարձր են աշխատանքի դիմաց վարձատրությունը և բիզնեսի՝ աշխատատեղեր ստեղծելու կարողությունը: |
| Արտադրողականության աճի դրական ազդեցությունը սպառողների վրա | Արտադրողականության աճը ապահովելով թողարկման ծավալների ավելացում՝ առանց նոր ռեսուրսների ներգրավման, և արդյունքում նվազեցնելով արտադրանքի յուրաքանչյուր միավորի թողարկման ծախսերը, հանգեցնում է գների իջեցման և աշխատավարձերի աճի, հետևաբար նաև սպառողների գնողունակության բարձրացման: |
| Արտադրողականության աճը նպաստում է զբաղվածության աճին: | Բարձր գնողունակությունը նպաստում է համախառն պահանջարկի, հետևաբար նաև աշխատանքի պահանջարկի աճին, ինչի արդյունքում զբաղվածությունն աճում է: |

⁵ St' u Povysheniye proizvoditelnosti: kratkiy obzor rukovodstva dlya organizatsiy rabotodateley, MOT, 2021. էջ 11-13: https://www.ilo.org/moscow/information-resources/publications/WCMS_774539/lang--ru/index.htm

| | |
|---|---|
| <p>Արտադրողականության աճը նպաստում է աղքատության Մակարդակի կրճատմանը:</p> | <p>Արտադրողականության մեծացման արդյունքում սպառողների գնողունակության աճը կարող է ստեղծել նաև սպառողների խնայողության հնարավորության, ինչն էլ ապահովում է աղքատության կրճատում և բարեկեցության բարձրացում: Ազդեցության այս դրսևորումն առանձնահատուկ նշանակություն ունի սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանքներ թողարկող և ծառայություններ մատուցող ճյուղերի համար, քանի որ եկամտի ցածր մակարդակ ունեցող բնակչության սպառման կառուցվածքում նման ապրանքները և ծառայությունները ունեն մեծ մասնաբաժին, հետևաբար դրանց գների կրճատումը կհանգեցնի աղքատության նվազման:</p> |
|---|---|

Այսպիսով, բարձր արտադրողականությունը՝ նպաստելով մասնավոր հատվածի շահութաբերության աճին, ինչպես նաև տնտեսությունում ցածր սպառողական գների և բարձր աշխատավարձերի հաստատմանը, կարող է ապահովել տնտեսական աճ, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել տնտեսական զարգացման, ազգաբնակչության բարձր կենսամակարդակի ու հասարակական բարեկեցության աճի: Այս տեսակետից բարձր արտադրողականությունը տնտեսական աճի լուրջ նախապայման է և ներառական զարգացման կարևոր նախադրյալ:

Արտադրողականության աճի գործոնային ազդեցությունները

Արտադրողականությունը ենթարկվում է բազմակողմանի գործոնային ազդեցության, որոնցից հենքային են.

- Ֆիզիկական՝ հիմնական կապիտալը (սարքավորումներ, շինություններ), որի ազդեցությունը արտադրողականության վրա կարող է տեղի ունենալ
 - քանակական աճի հաշվին,
 - որակի բարելավման շնորհիվ,
 - մասշտաբի էֆեկտով, երբ արտադրության գործոնների աճը և արտադրության չափերի ընդլայնումը ուղեկցվում են համախառն միջին ծախսերի կրճատմամբ, և ճյուղը կամ կազմակերպությունը, ձեռք բերելով ծախսային առավելություններ և ավելացնելով արտադրության գործոնները, կարող է ապահովել թողարկման ծավալի ավելի մեծ աճ:
 - Մարդկային կապիտալը, որի ազդեցությունը արտադրողականության վրա կարող է տեղի ունենալ
 - բնակչության կրթական մակարդակով,
 - մարդկանց ճանաչողական ու ոչ ճանաչողական հմտությունների մակարդակով:
 - Տեխնոլոգիական առաջընթացը և այն ապահովող գործոնները (նորարարություններ, ԳՀՓԿԱ, գիտելիքների և տեխնոլոգիաների հասանելիություն), ինչը հնարավորություն է տալիս՝

- միննույն ռեսուրսներով ստեղծելու ավելի մեծ արդյունք,
- միննույն արդյունքը ստեղծելու ավելի քիչ քանակի ռեսուրսներով:
- Արտադրողականության աճի հենքային գործոն է գործարար միջավայրը:

2. Գործարար միջավայրը որպես արտադրողականության աճը գեներացնող կարևոր գործոն. դրսևորումները և խնդիրները

Գործարար միջավայրը \Rightarrow *տնտեսական վերափոխում* \Rightarrow *արտադրողականության աճ կապը և դրանց փոխազդեցությունները*

Գործարար միջավայրը ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված տնտեսական, քաղաքական, իրավական, ինստիտուցիոնալ և կարգավորող այլ գործիքակազմերի համալիր է: Գործարար միջավայրը ներառում է նաև ձեռնարկատիրական գործընթացների հիմնական մասնակիցների (պետական մարմիններ, կարգավորող մարմիններ և բիզնեսի անդամ կազմակերպություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և այլն) հարաբերությունների կարգավորման կառուցակարգերը (մեխանիզմները):

Ըստ այդմ, գործարար միջավայրի բարելավումը ենթադրում է բիզնես ոլորտի կարգավորմանն ուղղված պետական քաղաքականությունների և ռազմավարությունների, օրենքների ու կանոնակարգերի փոփոխության միջոցով տնտեսական վերափոխումների իրականացում՝ բիզնեսի արդյունավետության բարձրացման և տնտեսության արտադրողականության աճի խթանման նպատակով:

Տնտեսական վերափոխումը շարունակական գործընթաց է՝ ուղղված՝

- *ընդհանուր արտադրողականության բարձրացմանը՝* աշխատուժի և այլ արտադրական ռեսուրսների՝ ցածր արտադրողականությամբ ոլորտներից բարձր արտադրողականությամբ ոլորտներ տեղափոխելու միջոցով (*կառուցվածքային փոփոխություն*),

- *ոլորտային արտադրողականության բարձրացմանը՝* ռեսուրսների տեղափոխում ցածր արտադրողականությամբ գործունեությունից դեպի նույն ոլորտի բարձր արտադրողականությամբ գործունեություն, օրինակ՝ հմտությունների ուսուցում, ընկերություններում նորարարությունների խթանում և այլն (*ոլորտի բարելավում*):

Կառուցվածքային փոփոխություններն առանցքային են տնտեսական վերափոխման գործում: Թեպետ դրանք հիմնականում ներառում են զբաղվածության և արտադրանքի ոլորտային փոփոխությունները, այնուամենայնիվ *արտադրողականության աճ* կարող են դիտվել նաև ոլորտներում, արժեչղթաներում կամ ընկերությունների ներսում:


Ռեսուրսների տեղափոխումը ցածր արտադրողական գործունեությունից բարձր արտադրողական գործունեության ոլորտներ հաճախ դիտարկվում է որպես տեղափոխում «ավանդական» ոլորտներից ավելի արդյունավետ՝ «ժամանակակից» ոլորտներ: Արդյունքում, ավելի արդյունավետ գործող ընկերությունների շնորհիվ, նույնիսկ ցածր արտադրո-

ղական ոլորտներում է բարձրանում միջին արտադրողականությունը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է արտադրողականության աճի տնտեսության մակարդակով: Մա նշանակում է, որ արտադրողականության բարձրացմանն ուղղված արտադրական ռեսուրսների տեղաշարժը կոնկրետ ոլորտների ներսում կամ տարբեր ոլորտների միջև կարող է լինել տնտեսական աճի ազդեցիկ շարժիչ ուժ: Ասվածի մասին են վկայում նաև դրա գործնական դրսևորումները: Մասնավորապես, Մակմիլանի և Հարթգենի՝ դեռևս 2000-2010 թթ. Ենթասահարական Աֆրիկայում աշխատանքի արտադրողականության փոփոխությունների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած աշխատուժի տեղաշարժին գյուղատնտեսությունից դեպի ավելի բարձր արտադրողական ոլորտներ՝ այնուամենայնիվ այդ ժամանակահատվածում գյուղատնտեսությունում գրանցվել է աճ՝ այդ ոլորտում աշխատանքի արտադրողականության ավելի մեծ տոկոսային աճի շնորհիվ⁶:

Ամփոփելով կարելի է ասել, որ տնտեսական վերափոխումը արտադրողականության բարձրացմանն ուղղված շարունակական գործընթաց է՝ գործարար միջավայրի բարելավման, այլընտրանքային մոտեցումների ճիշտ ընտրության ու ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխման միջոցով (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Բիզնես միջավայրի բարելավումից մինչև տնտեսական վերափոխում և արտադրողականության աճ



⁶ Տե՛ս McMillan M., Harttgen K., What is Driving the “African Growth Miracle”? – Tunisia, 2014, էջ 209:

Ինչպես երևում է գծապատկերից, առանձնանում են ռեսուրսների տեղաշարժի երկու ուղղություններ.

● *ոլորտների միջև*՝ ցածր արտադրողականության ճյուղից դեպի բարձր արտադրողականությամբ ճյուղ արտադրական ռեսուրսների տեղափոխմամբ,

● *ոլորտների ներսում*՝ ցածր արտադրողականությամբ ընկերություններից դեպի բարձր արտադրողականություն ունեցող ընկերություններ արտադրական ռեսուրսների տեղափոխմամբ:

Հիմնվելով զարգացող երկրների փորձի ուսումնասիրությունների վրա՝ Մակմիլանը վեր է հանել ոլորտային արտադրողականության աճի խթանմանն ուղղված տնտեսական վերափոխման հետևյալ կարևոր ուղղությունները⁷.

● տնտեսական քաղաքականությունը. կարող է նպաստել մակրոտնտեսական կայունությանը,

● աշխատանքային կանոնակարգերը. կարող են աջակցել կամ խոչընդոտել աճը,

● գործարար միջավայրի ինստիտուտները,

● աշխատուժի կրթության և հմտությունների մակարդակը,

● ենթակառուցվածքների որակը:

Բիզնես միջավայրի բարելավման գործընթացները կենտրոնացած են շուկայական պայմանների վրա, իսկ տնտեսական վերափոխման միջամտություններն ուղղված են կոնկրետ ընկերությունների (խմբերի) կամ կոնկրետ ոլորտների արտադրողականության բարձրացմանը:

Պետք է արձանագրել, որ տնտեսության արտադրողականության աճը սերտորեն կապված է ձեռնարկություններում արտադրողականության աճի, ռեսուրսների ճիշտ տեղաբաշխման, բիզնես միջավայրի որակի և բիզնեսի դինամիկության հետ⁸: Այստեղ առանձնապես ծանրակշիռ է բիզնեսի դինամիկության դերը՝ որպես մրցակցային բիզնես միջավայրի որոշիչ գործոն և արտադրողականության աճի հենքային գործոն:

3. Բիզնեսի դինամիկությունը որպես արտադրողականության աճի գործոն. գործնական դրսևորումները

Բիզնեսի դինամիկությունը վերաբերում է բիզնեսի աճին, նորարարական զարգացումներին և շուկայի փոփոխություններին նրա արագ հարմարվելու կարողությանը: Բիզնեսի դինամիկությունը չափելու համար տարբեր հեղինակներ վերցնում են տարբեր փոփոխականներ, մասնավորապես՝ նոր աշխատատեղերի քանակ, նոր ձեռնարկությունների թիվ, արտադրության մեջ ոչ նյութական միջոցների քա-

⁷ St' u **McMillan M., Rodrik D., Sepulveda C.**, Structural Change, Fundamentals And Growth: A Framework And Case Studies - Washington DC - Cambridge MA, 2017, էջ 330:

⁸ St' u **Decker R., Haltiwanger J., Jarmin R. S., & Miranda J.**, The Role of Entrepreneurship in US Job Creation and Economic Dynamism - The Journal of Economic Perspectives, 2014, էջ 45:

նակ⁹, արտադրողականության աճ¹⁰ և այլն:

Բիզնեսի դինամիկության խթանմանն առանձնապես նպաստում են ընկերությունների շուկա մուտքի և ելքի վրա հնստիտուցիոնալ փոփոխությունների ազդեցության նոր մեխանիզմները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործող ընկերություններում նորարարությունն ավելի արդյունավետորեն է նպաստում արտադրողականության աճին, քան նոր մուտք գործող ընկերություններում¹¹: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ բիզնեսի դինամիկության բարձր մակարդակը ազդում է տնտեսության մեջ ցածր արտադրողականությունից դեպի բարձր արտադրողականություն աղբյուրների վերաբաշխման վրա, ճիշտ է այն պնդումը, որ «հին ընկերությունների դուրս գալը և նոր ընկերությունների մուտքը դրական ազդեցություն են ունենում բիզնեսի դինամիկության և աշխատատեղերի տեղաշարժի վրա»¹²: Ուշագրավ է, որ 1980-ական-ներից մինչև 2020 թ.-ի ընկերությունների ընդհանուր թվաքանակում նոր ընկերությունների տեսակարար կշիռը նվազել է՝ տարեկան 15%-ից հասնելով հազիվ 10%-ի: Նոր ընկերությունների շուկա մուտքի խոչընդոտները, անբարենպաստ բիզնես միջավայրը (վարչական խոշոր ծախսերը), ֆինանսական ռեսուրսների անհասանելիությունը և այլն թուլացրել են բիզնեսի դինամիկությունը: Որոշ հին ընկերություններ իրենց մշտական խնդիրներով նույնպես հանգեցրել են բիզնեսի դինամիկության նվազմանը: Վերջիններիս ելքը շուկայից կարող է առաջացնել զբաղվածության աճ հատկապես նոր ստեղծված ընկերություններում, որոնք նպաստում են աշխատատեղերի ստեղծմանը¹³: Հին ընկերությունների փոխարինումը նորերով հնարավորություն կտա ստեղծելու ապրանքներ՝ ավելի նոր տեխնոլոգիաների կիրառմամբ և հետևաբար՝ ավելի ցածր արտադրական ծախսերով: Այստեղ բարձր է գնահատվում նաև նոր ապրանքների և ծառայությունների ավելացման դերը: Առանց այս զարգացումների բիզնեսի դինամիկությունը կնվազի նոր ձեռնարկություններում տնտեսական ակտիվության մասնաբաժնի նվազման տեսքով, ինչը կարող է նշանակել արտադրողականության աճի նվազում՝ նորարարական ակտիվության անկման պատճառով: Այսինքն՝ բիզնեսի դինամիկության անկման հնարավոր բացատրությունը կարելի է գտնել նաև բարձր տեխնոլոգիաների ոլորտներում¹⁴: Բիզնեսի դինամիկայի անկման պատ-

⁹ Տե՛ս **Haskel J., Westlake S.**, *Capitalism Without Capital: The Rise of The Intangible Economy* - Princeton: Princeton University Press, 2017, էջ 288:

¹⁰ Տե՛ս **Garcia-Macia D., Chang-Tai H., Klenow P. J.**, *How Destructive Is Innovation?* - Department of Economics, Stanford University, 2016, էջ35:

¹¹ Տե՛ս նույն տեղը:

¹² **Haltiwanger J., Scarpetta S., Schweiger H.**, *Cross country differences in job reallocation: the role of industry, firm size and regulations*, London EC2A 2JN, United Kingdom, 2014, p. 32.

¹³ Տե՛ս **Haltiwanger J., Jarmin R., & Miranda J.**, *Who Creates Jobs? Small Versus Large Versus Young*. University of Maryland and NBER, 2013, էջ 47:

¹⁴ Տե՛ս **Hyatt H. R., Spletzer, J.** *The Recent Decline in Employment Dynamics*. IZA Journal of Labor Economics, 2013, էջ 21:

ճառներ են նաև դեպի նոր ձեռնարկություններ աշխատողների վերաբաշխման արագության նվազումը և տնտեսության մեջ սկսնակ ձեռնարկությունների թվի կրճատումը¹⁵: Բիզնեսի դինամիկայի նվազմանը նպաստում են նաև գների ոչ ռացիոնալ հարաբերակցությունը սահմանային արժեքին, նոր ձեռնարկությունների ծնելիության և մահացության մակարդակների անհամաչափությունները և այլն¹⁶:

Բիզնես դինամիկության գործնական դրսևորումները

Բիզնեսի դինամիկությունը գլոբալ մրցունակության ինդեքս (ԳՄԻ) 4.0-ի (Global Competitiveness Index (GCI) 4.0) 11-րդ հենասյունն է, որը ներառում է ութ փոփոխականներ՝ բիզնես սկսելու արժեքը, բիզնես սկսելու ժամանակը, անվճարունակության փոխհատուցման տոկոսը, անվճարունակության կարգավորման դաշտը, ռիսկերի նկատմամբ վերաբերմունքը, պատվիրակումը, նորարարական ընկերությունների աճը, խոչընդոտող գաղափարների ընդունումը և դրանց դեմ պայքարելու պատրաստակամությունը¹⁷:

Համաշխարհային զարգացումները

«Գլոբալ մրցունակության» զեկույցի՝ բիզնեսի դինամիկության փոփոխականների վերլուծությունը ըստ աշխարհի յոթ աշխարհագրական տարածաշրջանների (տե՛ս աղյուսակ 3) ցույց է տալիս, որ բիզնես սկսելն ավելի հեշտ է Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում և Օվկիանիայում: Բիզնես սկսելը շատ բարդ է Հարավային Ամերիկայի երկրներում: Եվրամիության անդամ երկրները ցույց են տվել լավագույն արդյունք՝ բիզնես սկսելու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի ցուցանիշով, ինչը բացատրվում է այդ տարածաշրջանում բիզնեսի ֆինանսավորման մատչելիությամբ և հասանելիությամբ:

Աղյուսակ 3

«Բիզնեսի դինամիկության» վերաբերյալ արդյունքների համեմատությունը ըստ խոշոր տարածաշրջանների, 2020 թ.¹⁸

| Փոփոխականներ | Երկիր | ԵՄ | Եվրոպայի մնացած հատված | Աֆրիկա | Ասիա | Հվ. Ամե. րիկա | Օվկիանիա | Հս. Ամե. րիկա | Ընդհանուր |
|-----------------------------------|-------|------|------------------------|--------|------|---------------|----------|---------------|-----------|
| 1. Ընկերություն հիմնելու ծախսերը | | 11.9 | 19.4 | 20.8 | 20.9 | 52.2 | 14.2 | 13.1 | 20.2 |
| 2. Ընկերություն հիմնելու ժամանակը | | 22.7 | 17.0 | 15.6 | 19.1 | 42.0 | 6.7 | 12.2 | 19.5 |

¹⁵ Տե՛ս **Decker R., Haltiwanger J., Jarmin R. S., Miranda J.**, The Role of Entrepreneurship in US Job Creation and Economic Dynamism, The Journal of Economic Perspectives, 2014, էջ 45:

¹⁶ Տե՛ս **Autor D., Dorn D., Katz L., Patterson C., Van Reenen J.**, Concentrating on the Fall of the Labor Share. American Economic Review, Cambridge, MA, 2017, էջ 13:

¹⁷ Տե՛ս **WEF - Global Competitiveness Report**, Geneva, 2018, էջ 71:

¹⁸ Տե՛ս **Virglerova Z., Addeo F., Zapletalikova E.**, Business dynamism in the world economy, LLC “Consulting Publishing Company “Business Perspectives”, 2020, էջ 6:

| | | | | | | | | |
|--|------|------|------|------|------|------|------|------|
| 3. Անվճարունակության վերականգնման տոկոսադրույքը | 46.4 | 38.2 | 39.5 | 42.9 | 29.9 | 55.1 | 44.0 | 41.7 |
| 4. Անվճարունակության կարգավորող դաշտը | 10.4 | 7.1 | 9.4 | 9.2 | 8.4 | 8.0 | 8.8 | 9.2 |
| 5. Ռիսկի նկատմամբ վերաբերմունքը | 3.9 | 4.2 | 3.9 | 4.1 | 4.0 | 4.8 | 4.1 | 4.0 |
| 6. Լիազորություն փոխանցելու պատրաստակամությունը | 4.5 | 4.5 | 4.4 | 4.4 | 4.1 | 5.2 | 4.4 | 4.4 |
| 7. Նորարար ընկերությունների աճը | 4.1 | 4.4 | 4.1 | 4.2 | 3.8 | 4.4 | 4.0 | 4.1 |
| 8. Ընկերություններ, որոնք ընդունում են խանգարող գաղափարը | 3.7 | 3.9 | 3.7 | 3.8 | 3.6 | 4.0 | 3.5 | 3.7 |

Երկրորդ լավագույն արդյունք է ցույց տալիս Հյուսիսային Ամերիկան, երրորդը՝ Օվկիանիան: Բիզնես սկսելու համար պահանջվող ժամանակը ամենակարճն է Օվկիանիայում: Եվրամիությունը զբաղեցնում է հինգերորդ տեղը Օվկիանիայից, Հյուսիսային Ամերիկայից, Աֆրիկայից, Ասիայից և Եվրոպայի մնացած երկրներից հետո: Շատ երկրներ պարզեցրել են բիզնես սկսելու գործընթացը՝ գործարկելով ընկերությունների գրանցման առցանց համակարգեր:

Անվճարունակության փոխհատուցման ամենաբարձր միջին արժեք ունի Օվկիանիան, իսկ Հարավային Ամերիկան՝ ամենացածր արժեք: ԵՄ երկրները լավագույն արդյունքներ են ցուցաբերում անվճարունակության կարգավորման մասով:

Բիզնես դինամիկայի վերջին չորս փոփոխականների (վերաբերմունք ռիսկի նկատմամբ, լիազորությունները փոխանցելու պատրաստակամություն, նորարարական ընկերությունների աճ և խանգարող գաղափարներ ընդունող ընկերություններ) վերաբերյալ աշխարհագրական տարածքների միջև տարբերությունը այդքան ակնհայտորեն չի երևում՝ դրանց գնահատման սանդղակի նեղ (1-7 միավոր) լինելու պատճառով: Օվկիանիան լավագույն արդյունքներ է ցույց տալիս, հատկապես բիզնես ռիսկի նկատմամբ վերաբերմունքի և լիազորությունները փոխանցելու պատրաստակամության հարցում:

Ամփոփելով կարելի էասել, որ Օվկիանիան բիզնես դինամիկության լավագույն կատարողական ունեցող տարածաշրջանն է:

Հայաստանյան զարգացումները

Հայաստանի մասով «Գլոբալ մրցունակության» զեկույցի՝ բիզնեսի դինամիկության վերաբերյալ փոփոխականների վերլուծությունը ցույց է տալիս որոշակի բարելավում (տե՛ս աղյուսակ 4):

Բիզնեսի դինամիկության գնահատականները ՀՀ-ում 2018-2019 թթ.¹⁹

| Փոփոխական | 2018 | 2019 |
|---|-------------|-------------|
| Ընկերություն հիմնելու ծախսերը | 99.6 | 99.6 |
| Ընկերություն հիմնելու ժամանակը | 96 | 97 |
| Անվճարունակության վերականգնման տոկոսադրույքը | 39.2 | 41.1 |
| Անվճարունակության կարգավորող դաշտը | 46.9 | 46.9 |
| Ռիսկի նկատմամբ վերաբերմունքը | 54.3 | 58.7 |
| Լիազորություն փոխանցելու պատրաստակամությունը | 51.3 | 52.4 |
| Նորարար ընկերությունների աճը | 48.2 | 54.1 |
| Ընկերություններ, որոնք ընդունում են խանգարող գաղափարը | 46.3 | 50.6 |

Այս տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին շրջանում ՀՀ-ում բարձրացել է բիզնեսի դինամիկությունը: Նկատելիորեն կրճատվել է ընկերություն ստեղծելու համար պահանջվող ժամանակը: Նման զարգացումները կարելի է վերագրել գործընթացների և կանոնակարգերի պարզեցմանը, ինչպես նաև բիզնեսի և նորարարության խթանմանը: ՀՀ-ում ընկերությունները ավելի մեծ հակվածություն են ցուցաբերում ռիսկի դիմելու և նորարարության մեջ ներգրավվելու, ինչը վկայում է ավելի դինամիկ և ճկուն բիզնես միջավայրի մասին:

4. Արտադրողականություն և տնտեսական աճ. փոխադրեցությունները և գործնական դրսևորումները

Համախառն գործոնային արտադրողականության (ՀԳԱ) ցուցանիշը համախառն արդյունքի հարաբերակցությունն է համախառն մուտքերին (աշխատանք և կապիտալ)^{*} և արտահայտում է տնտեսությունում ստեղծված ավելացված արժեքի բաշխման մեխանիզմների արդյունավետությունը՝ եկամուտների հավասարաչափ բաշխման տեսանկյունից: Տնտեսական աճում համախառն գործոնային արտադրողականության դերով և չափով պայմանավորված կա տնտեսական աճի երկու ճանապարհ.

- տնտեսական աճը ապահովվում է արտադրական գործոնների քանակական աճի հաշվին,
- տնտեսական աճը ապահովվում է արտադրական գործոնների որակական աճի, այսինքն՝ համախառն գործոնային արտադրողականության²⁰ հաշվին:

Երկրների տնտեսական աճի վերլուծությունը ցույց է տալիս, որ երբ ՀՆԱ-ն և ՀԳԱ-ն դրսևորում են աճի համամասնական միտումներ, ապա տնտեսական աճն ապահովվում է արտադրական գործոնների ո-

¹⁹ Տե՛ս WEF - Global Competitiveness Report, Geneva, 2019, էջ 62, 2018, էջ 71:

^{*} 1-ից բարձր արդյունքը նշանակում է, որ թողարկված արդյունքը գերազանցում է ներդրված կապիտալի արժեքը, և այս դեպքում գործ ունենք արդյունավետության հետ:

²⁰ Տե՛ս **Maddison A.** “Dynamic Forces in Capitalist Development: Along Run Comparative View”, Oxford, Oxford Universiti Press, 1991, էջ 333:

րակական աճի՝ ՀԳԱ-ի հաշվին: ՀՆԱ-ի նկատմամբ ՀԳԱ-ի աճի ցածր տեմպերի պայմաններում տնտեսական աճը գեներացվում է արտադրության գործոնների մասնակիցների միջև գործող ավելացված արժեքի արդար բաշխման շնորհիվ: Այս դեպքում զարգացումը ներառական է: Եվ հակառակը, երբ ՀԳԱ-ի աճի տեմպերը գերազանցում են ՀՆԱ-ի աճի տեմպերը, նշանակում է, որ տնտեսության մեջ ստեղծված հավելյալ արժեքը չի նպաստել տնտեսական աճին, քանի որ այն արդարացիորեն չի բաշխվել արտադրության գործոնների մասնակիցների միջև, այլ կենտրոնացել է «կուտակումներում»²¹: Արդյունքում հարուստներն ավելի են հարստացել, աղքատներն՝ ավելի աղքատացել, և զարգացումը ներառական չէ:

Համախառն գործոնային արտադրողականության շնորհիվ տնտեսությունում ստեղծված ավելացված արժեքի բաշխման արդյունավետությունը (հասարակության, մասնավորապես զբաղված բնակչության միջև եկամուտների հավասարաչափ բաշխման տեսանկյունից) հասկանալու համար ՀՆԱ-ի և ՀԳԱ-ի աճի տեմպին զուգահեռ անհրաժեշտ է դիտարկել նաև աշխատանքի արտադրողականության աճի տեմպը: Մասնավորապես, եթե այն գերազանցում է ՀԳԱ-ի աճի տեմպը, նշանակում է, որ ՀՆԱ-ի աճը ապահովվել է զբաղված բնակչության ջանքերի՝ մարդկային կապիտալի հմտացման կամ, ինչն ավելի հավանական է, աշխատողների շահագործման արդյունքում: Այստեղ կարևոր է ՀԳԱ-ի աճին զուգահեռ դիտարկել նաև իրական աշխատավարձի աճի տեմպերը, ինչը հնարավորություն կտա ըստ էության գնահատելու ՀԳԱ-ն և տնտեսական զարգացման ներառականության մակարդակը: Մասնավորապես, եթե ՀՆԱ-ի աճի տեմպը և ՀԳԱ-ն չեն ուղեկցվում աշխատավարձի համապատասխան աճի տեմպով, ապա կարելի է ենթադրել, որ տեղի է ունենում ոչ ներառական զարգացում, որի ժամանակ չի աճում վարձու աշխատողների բարեկեցությունը: Եթե ՀՆԱ-ի աճի տեմպն ուղեկցվում է աշխատավարձի համարժեք աճով, իսկ ՀԳԱ-ի աճի տեմպը չի փոխվում կամ հետ է մնում ՀՆԱ-ի աճի տեմպից, ապա կարելի է ենթադրել, որ ավելացված արժեքը համարժեքորեն է բաշխվում արտադրության այն մասնակիցների միջև, որոնց ջանքերով ապահովվել է այդ աճը:

Այս առումով կարելի է ասել, որ աշխատավարձը՝ որպես աշխատողի գնահատման և մոտիվացման միջոց, աշխատանքի արտադրողականության բարձրացման կարևոր խթան է: Միաժամանակ, արտադրողականությունն էլ իր հերթին կարող է լինել աշխատավարձի աճի ազդեցիկ գործոն: Այսպիսով, *աշխատանքի բարձր արտադրողականությունը* երկարաժամկետ հատվածում դառնում է կայուն և ներա-

²¹ Տե՛ս **Charles Hulten**, “Total Factor Productivity. A short biography”, Working Paper 7471, National Bureau of Economic Research, Cambrdg, 2000, էջ 37-46, 56-60: <https://www.nber.org/papers/w7471.pdf>

ռական տնտեսական աճի, ինչպես նաև տնտեսության մրցունակության ու բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևորագույն նախապայմաններից մեկը: Հաշվի առնելով համախառն գործոնային արտադրողականության բացառիկ նշանակությունը տնտեսական զարգացման արդյունավետության բարձրացման ու ներառականության ապահովման հարցում՝ այն կարելի է դիտարկել որպես ներառական զարգացման այլընտրանքային ցուցանիշ և ներառել մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում:

5. Արտադրողականության և տնտեսական աճի փոխազդեցության գործնական դրսևորումները ՀՀ-ում


Դեռևս 2019 թ. էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանը խոստովանում էր, որ Հայաստանի տնտեսության վիճակը բավականին մտահոգիչ է. «...Ունենք 8 անգամ ավելի ցածր արտադրողականություն, քան Եվրոպայի ցանկացած միջին երկիր, առնվազն 2 անգամ ցածր արտադրողականություն, քան ԵԱՏՄ առաջատար պետությունները, և դա ստիպում է մեզ մտածել այն փոփոխությունների մասին, որ պետք է անել տնտեսության ներկա արտադրողականությունը և մրցունակությունը բարձրացնելու համար»²²: Ցավոք, հաջորդ տարիներին նույնպես այս ուղղությամբ Հայաստանում շոշափելի արդյունք չարձանագրվեց: Եթե աշխատանքի արտադրողականությունը 2017-2019 թթ.-ին դանդաղ, բայց աճում էր, և աճի միջին տեմպը կազմում էր 5.5%, ապա 2020 թ. 2019-ի նկատմամբ այն կազմում է 0.95%, իսկ 2021 թ.-ին՝ 2020 թ. նկատմամբ՝ 1.1%: Այստեղ ուշագրավ է էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի 2023 թ. էլույթը. «Այսօր դեռևս մեր երկրի տնտեսության արտադրողականությունը մնում է բավականին ցածր: Նախնական հաշվարկներով՝ մեկ ժամում մեկ աշխատողի կողմից ստեղծած ավելացրած արժեքը գնահատվում է 8,7 դոլար, այն դեպքում, երբ Եվրոպայում այն 60 դոլարից ավել է: Մենք դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու, որ մեր երկրի աշխատանքի արտադրողականությունը աշխարհի մակարդակով մրցունակ դառնա»²³:

Այս համատեքստում բավականին խոսուն է ՀՀ և միջազգային մակարդակով աշխատանքի արտադրողականության (արտահայտված մեկ ժամում մեկ աշխատողի կողմից թողարկվող ՀՆԱ-ի ծավալով) համեմատական վերլուծությունը (տե՛ս գծապատկեր 3):

²² «Որտե՞ղ է Հայաստանի տնտեսության ապագան. էկոնոմիկայի նախարարի անկեղծ խոստովանությունը», 168.am, 09.09. 2019:

²³ «Վահան Քերոբյանը թվային փոխակերպումը համարում է Հայաստանում արտադրողականության բարձրացման գլխավոր բաղադրիչ», 168.am, 19.05.2023:

Աշխատանքի արտադրողականությունը 2000-2021 թթ.
(ֆիքսված 2010 թ. թ. ԱՄՆ դոլարով)²⁴




Գծապատկերում Հայաստանի և մյուս երկրների աշխատանքի արտադրողականության կորերի միջև բավականին մեծ կտրվածությունը վկայում է այլ երկրների համեմատությամբ Հայաստանում աշխատանքի արտադրողականության մտահոգիչ ցածր տեմպերի մասին: Ըստ այդմ, թեև ՀՀ-ում 2000-2021 թթ. աշխատանքի արտադրողականությունը հիմնականում ունի աճի միտում, այնուամենայնիվ աճի տեմպերը շատ ցածր են: Մասնավորապես, 2021 թ. աշխատանքի արտադրողականությունը Հայաստանում կազմել է 8,20 դոլար/մարդ-ժամ, ինչը 6 անգամ ցածր է ՏՀԶԿ միջինից, 6,5 անգամ՝ Եվրոպական միության միջինից, 7,5 անգամ Եվրատարածքի երկրներից, 9 անգամ՝ ԱՄՆ-ից, 3,5 անգամ՝ Ռուսաստանից և 6,4 անգամ Թուրքիայից:

Այստեղ կարևոր է հասկանալ ՀՀ-ում աշխատանքի արտադրողականության ցածր տեմպերի պատճառները գործոնային ազդեցությունների ներքո (տե ս գծապատկեր 4):

²⁴ Productivity - GDP per hour worked - OECD Data, <https://data.oecd.org/lprdty/gdp-per-hour-worked.htm>

ՀՆԱ-ի²⁵, ՀԳԱ-ի²⁶ և աշխատանքի արտադրողականության²⁷ աճի տեմպերի դինամիկան ՀՀ-ում 2000-2019 թ.թ.



Ինչպես տեսնում ենք, դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ-ն և ՀԳԱ-ն հիմնականում դրսևորում են ներդաշնակ վարքագիծ. ՀԳԱ-ի աճն ուղեկցվում է ՀՆԱ-ի աճով, ՀԳԱ-ի նվազումը՝ ՀՆԱ-ի նվազմամբ: Սա նշանակում է, որ տնտեսական աճը ապահովվում է ոչ թե արտադրական գործոնների քանակական, այլ որակական աճի՝ ՀԳԱ-ի հաշվին: Այստեղ բացառություն են 2007 և 2019 թվականները, որտեղ ՀՆԱ-ի աճի տեմպն աճում է 0.5 %-ով և 2.4 %-ով՝ համապատասխանաբար, իսկ ՀԳԱ-ի աճի տեմպը՝ նվազում է 2.36 %-ով և 3.33 %-ով, ինչը կարելի է բացատրել 2008-2009 թթ. նախաձգնաժամային իրավիճակով և Քովիդ-19-ի հետևանքով արտադրական ուժերի նվազմամբ: Մի դիտարկում ևս. 2014 – 2018 թ. թ. ՀԳԱ-ի աճի տեմպերը գերազանցում են ՀՆԱ-ի աճի տեմպերը, ինչը փաստում է, որ տնտեսության մեջ ստեղծվել է հավելյալ արժեք, որը համարժեքորեն չի վերաբաշխվել հասարակության անդամների միջև և չի նպաստել ազգաբնակչության բարեկեցության աճին: Այսինքն, 2014–2018 թթ. երկրում զարգացումը ներառական չի եղել: Ասվածի մասին է վկայում նաև ՀԳԱ-ի և ՀՆԱ-ի աճի տեմպին զուգահեռ աշխատանքի արտադրողականության աճի տեմպի դիտարկումը: Ըստ այդմ, դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը հիմնականում գերազանցել են

²⁵ Տե՛ս Ազգային հաշիվներ / Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (armstat.am), ՀՆԱ օգտագործումը հիմնական ծախսային բաղադրիչներով, Համախառն կուտակման գործակից, էջ 37:


²⁶ Տե՛ս Global Competitiveness Report, Annual Report, IMF, World Economic Forum, 2020-2021, Committed to Improving the State of the World, էջ 92:

²⁷ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք / Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (armstat.am), Աշխատանքի շուկա:

ՀԳԱ-ի աճի տեմպերը: Մա նշանակում է, որ ՀՆԱ-ի աճն ապահովվել է զբաղված բնակչության ջանքերի՝ մարդկային ներուժի հմտացման կամ, որ ավելի հավանական է, աշխատուժի շահագործման, ավելի կոնկրետ՝ ոչ համարժեք՝ ցածր վճարման հետևանքով: Հավելենք, որ համախառն գործոնային արտադրողականությունից առաջացող տնտեսական աճի արդյունքները չեն նպաստել հասարակության, մասնավորապես զբաղված բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Ասվածն ավելի հիմնավորելու համար նպատակահարմար է կատարել աշխատանքի արտադրողականության և իրական աշխատավարձի աճի տեմպերի համեմատական վերլուծություն (գծապատկեր 5):

Գծապատկեր 5

Աշխատանքի արտադրողականության և իրական աշխատավարձի աճի տեմպերը ՀՀ-ում 2000-2021 թթ.²⁸



Ինչպես երևում է գծապատկերից, հատկապես 2009 թ. համաշխարհային ճգնաժամից հետո իրական աշխատավարձի աճի տեմպերը էականորեն հետ են մնում աշխատանքի արտադրողականության աճի տեմպերից: Իրական աշխատավարձի դինամիկան հատկապես նվազող է 2014-2017 թթ. -ին: 2021 թ., չնայած աշխատանքի արտադրողականության էական աճին (աճի տեմպը մեկ տարում -3.275-ից հասել է 9,232), իրական աշխատավարձի դինամիկան նվազող է (աճի տեմպը 2.6-ից նվազել է մինչև 0.3): Մա հենց խոսում է այն մասին, որ տնտեսական աճն ապահովվել է աշխատանքային ռեսուրսների հաշվին, մինչդեռ ստացված օգուտներից վերջիններիս կենսամակարդակը չի աճում: Այստեղ կարելի է

²⁸ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք / Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (armstat.am), Գենսամակարդակ:

արձանագրել, որ աշխատանքի արտադրողականության աճի ցածր տեմպերը պայմանավորող հիմնական գործոններից է իրական աշխատավարձի աճի ցածր մակարդակը, քանի որ հասարակությունը «լսում է» տնտեսական աճի մասին, բայց չի տեսնում բարեկեցության բարելավումներ, մասնավորապես՝ իրական աշխատավարձի տեսքով:

Աշխատանքի արտադրողականության աճերը չեն փոխհատուցվում ստացված ավելացված արժեքի բաշխման արդյունավետ մեխանիզմների կիրառմամբ. ստեղծվում է մի իրավիճակ, երբ վարձու աշխատողները փաստացի շահագործվում են՝ կատարված աշխատանքի դիմաց վճարվելով հավասարակշիռ գնից ցածր աշխատավարձով, իսկ ապրանքներն ու ծառայությունները նրանք գնում են հավասարակշիռ գնից բարձր արժեքով: Այսինքն՝ արտադրողականության աճի տեմպը չի ուղեկցվում աշխատավարձի համարժեք աճի տեմպով, ինչի արդյունքում ցածր են ազգայնակշիռության բարեկեցությունը և կենսամակարդակը:

Եզրակացություն

Տնտեսական աճի առավել ամբողջական և խորը գնահատման համար կարևոր է տնտեսության արտադրողականությունն արտացոլող ցուցանիշների՝ ՀԳԱ-ի, աշխատանքի արտադրողականության, ինչպես նաև իրական աշխատավարձի աճի տեմպերի միաժամանակյա դիտարկումը՝ դրանց փոխկապակցվածության ներքո, և այդ համատեքստում դիտարկել խնդիրների վերհանումն ու դրանց հաղթահարման ուղիների մշակումը:

Նման մոտեցումը հնարավորություն կտա կենտրոնանալու ոչ թե երևույթների և «մակերեսային» խնդիրների վրա, ինչպիսիք, օրինակ, արտադրողականության ցածր տեմպերն են, այլ դրանց պատճառների և արտադրողականություն - տնտեսական աճ փոխազդեցությունների խնդիրների վրա, որոնց լուծումը հենքային է երկրի տնտեսական զարգացման և հասարակության բարեկեցության բարձրացման համար:

АМАЛЯ САРИБЕКЯН – *Взаимодействие производительности и динамичности бизнеса и их влияние на экономический рост.* – Непрерывный рост производительности является важной предпосылкой для стабильного экономического роста и повышения общественного благосостояния. В этом контексте важно выявление взаимодействия факторов повышения производительности и определение его задач. В статье особое внимание уделяется роли бизнес-среды и динамичности бизнеса как ключевого фактора обеспечения конкурентной бизнес-среды и роста производительности. Согласно докладу "Глобальная Конкурентоспособность", структура рынков в мире за последние десятилетия изменилась, а динамичность бизнеса выявляет тенденцию к снижению. Хотя в 2018-2019 гг. в Армении было проявлено некоторое улучшение динамичности бизнеса, тем не менее она достаточно низкая даже на уровне стран региона. В Армении с 2000 г. начавшиеся тенденции замедления роста производительности труда (средний темп роста-5,5%) еще более углубились в результате экономических потрясений 2020 года: средние темпы роста в 2020 году по сравнению с 2019 годом снизились до 0,95% и до 2021 года по сравнению с 2020 годом - до 1.1%.

սության մրցունակության ավելացմանը: Հայաստանում կիրառվող ներմուծման մաքսատուրքերի կշռված միջին արժեքը ԱՀԿ անդամ երկրների շարքում ամենացածրերից էր: Այն 2.7% էր, իսկ Մաքսային միության շրջանակում կիրառվող ներմուծման մաքսատուրքերի կշռված միջին արժեքը 7.6% էր¹: Համաշխարհային տնտեսության մեջ երկրի մասնակցության աստիճանի վրա ազդեցություն են ունենում նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են տնտեսաաշխարհագրական դիրքը, մշակույթը, արտաքին առևտրային քաղաքականությունը, տնտեսության կառուցվածքը և այլն: Համաշխարհային տնտեսության մեջ գործընթացները ստիպում են զարգացող երկրներին փնտրել ու գտնել համագործակցության նոր մոդելներ և ուղիներ՝ մաքսային, տնտեսական ու արժույթային միությունների ստեղծմամբ²: Վերջին երկու տասնամյակի ընթացքում համաշխարհային տնտեսության մեջ բավականին աճել է տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորումների դերը: Այսինքն՝ երկկողմ արտաքին առևտրային դասական հարաբերությունները կամ շատ ավելի զարգացած բազմակողմ արտաքին առևտրային հարաբերությունները փոխարինվում կամ փոխլրացվում են տարածաշրջանային արտաքին առևտրային հարաբերություններով: Այս համատեքստում շատ կարևոր է գնահատել տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ արդյունքները: Հայաստանի Հանրապետության անդամակցությունը ԵԱՏՄ-ին միանշանակ չի ընդունվել ի սկզբանե, և բազմաթիվ կողմ ու դեմ փաստարկներ են բերվել: Համաշխարհային բանկի կատարած հետազոտության մեջ նշվում է, որ ԵԱՏՄ անդամակցությունը ձեռնտու չէ ՀՀ-ին, քանի որ այն բավականին մեծ կախվածություն ունի ՌԴ տնտեսությունից, իսկ ռուբլու ավելի քան 80 տոկոս արժեզրկումը բացասական ազդեցություն կունենա հայկական ապրանքների արտահանման ծավալների վրա³: Մեկ այլ աշխատանքում ասվում է, որ ՀՀ անդամակցությունը ԵԱՏՄ-ին հիմնականում դրական ազդեցություն կունենա երկրի տնտեսության վրա, քանի որ հայկական ապրանքները շատ ավելի լավ պայմաններով կարող են իրացվել ԵԱՏՄ ընդհանուր շուկայում: Մակայն աշխատանքում որպես ԵԱՏՄ անդամակցության բացասական կողմ նշվում է, որ ԵԱՏՄ անդամակցության հետևանքով տեղական շուկայում կարող է նկատվել սպառողական ապրանքների գների բարձրացում, քանի որ ԵԱՏՄ շրջանակներում կիրառվող ներմուծման մաքսատուրքի միջին մակարդակը շատ ավելի բարձր է, քան կիրառվում է ՀՀ-ում⁴:

¹ St' u Eurasian Economic Commission and Interstate Bank. The Republic of Armenia in the Eurasian Economic Union. First Results, M., 2018:

² St' u **Էմնա Կարապետյան**, Եվրասիական տնտեսական միությունը ինտեգրման նոր հարաբերությունների պայմաններում, «Բանբեր ՀՊՏՀ», 2017 №1, Եր., 2017, էջ 133-138:

³ St' u World Bank. Armenia, Accelerating Reforms, Increased Uncertainty, Economic Update № 1, 2015:

⁴ St' u Caucasus Institute. The Economic Dimension of Cooperation between Armenia and Georgia: Facing New Challenges and Opportunities. Yerevan-Tbilisi, 2015:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը 2015 թվականի հունվարի 2-ից պաշտոնապես Եվրասիական տնտեսական միության անդամ է և կիրառում է Եվրասիական տնտեսական միության նորմատիվ իրավական բազայի դրույթները՝ մաքսասակագնային և սակագնային կարգավորման մասով⁵: Այսինքն, Հայաստանի Հանրապետությունն ապրանքների ներմուծման ժամանակ կիրառվում է Եվրասիական տնտեսական միության միասնական սակագինը⁶: Մյուս կողմից՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի Պայմանագրին միանալու մասին» Պայմանագրին կից 4-րդ հավելվածի՝ Հայաստանի տնտեսության համար մի շարք զգայուն ապրանքների համար ՀՀ-ում անցումային շրջանում կիրառվել են ԵԱՏՄ միասնական մաքսային սակագներից տարբերվող մաքսատուրքերի դրույքաչափեր⁷: Ժամանակի ընթացքում այդ ապրանքների մի մասի մաքսատուրքերի դրույքաչափերն աստիճանաբար աճել են՝ հավասարվելով ԵԱՏՄ միասնական սակագնին, իսկ մյուսների ցածր մաքսատուրքի դրույքաչափը ուղղակի փոխարինվել է ԵԱՏՄ միասնական սակագնով: Այս համատեքստում հարկ է նշել, որ ԵԱՏՄ շրջանակներում ներմուծման ժամանակ միասնական սակագնի կիրառումը նպատակ ունի կառույցի անդամ երկրների ներքին շուկաները պաշտպանել մրցակցությունից և նպաստել տեղական արտադրության զարգացմանը: Հետևաբար կարող ենք փաստել, որ ՀՀ-ի համար որոշակի զգայուն ապրանքախմբերի՝ նախկինում տրամադրված առավել ցածր մաքսատուրքերի դրույքաչափերը պետք է ապահովելին ՀՀ և ԵԱՏՄ անդամ մյուս երկրների տնտեսությունների կառուցվածքային տարբերությունների նվազեցում: Ավելին, ներկայումս կիրառվող ԵԱՏՄ միասնական սակագինը պետք է նախադրյալներ ստեղծի տեղական արտադրության զարգացման համար, ինչն իր հերթին կնպաստի ՀՀ արտահանման ծավալների ավելացմանը: ԵԱՏՄ շրջանակներում կարգավորվում է նաև զարգացող երկրների հետ արտաքին առևտուրը: Այսպես, համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 36-րդ հոդվածի՝ զարգացող և (կամ) առավել թույլ զարգացած երկրների տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով Եվրասիական տնտեսական միության անդամ երկրները կարող են տրամադրել սակագնային արտոնություններ՝ Եվրասիական տնտեսական միության սակագնային արտոնությունների միասնական համակարգից օգտվող՝ զարգա-

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն, <https://mineconomy.am/page/85> (մուտք՝ 29.08.2023):

⁶ Տե՛ս Եվրասիական տնտեսական հանձնաժողով, <http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Pages/default.aspx> (մուտք՝ 29.08.2023):


⁷ Տե՛ս Եվրասիական տնտեսական հանձնաժողով, <http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ttr/Documents/%D0%98%D0%97%D0%A%D0%AF%D0%A2%D0%98%D0%AF%20%D0%A0%D0%90%20%D0%BD%D0%B0%2012.06.2020.pdf> (մուտք՝ 29.08.2023):

ցող երկրների և (կամ) առավել թույլ զարգացած երկրների ծագում ունեցող ապրանքների նկատմամբ՝ միակողմանի հիմքով: Չարգացող երկրների ծագում ունեցող արտոնյալ ապրանքների համար ԵԱՏՄ մաքսային տարածք ներմուծման ժամանակ կիրառվում է Եվրասիական տնտեսական միության գործող միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի 25%-ի չափով իջեցում, իսկ առավել թույլ զարգացած երկրների ծագում ունեցող արտոնյալ ապրանքների համար կիրառվում է 0% մաքսատուրքի դրույքաչափ:

Նախքան ՀՀ-ի՝ ԵԱՏՄ անդամ երկրների հետ արտաքին առևտրի վերլուծությունը ներկայացնենք ՀՀ տնտեսության բացվածության ասիճանը և ՀՀ արտաքին առևտուրը ընդհանուր վերցրած⁸:

Գծապատկեր 1

ՀՀ տնտեսության բացվածության աստիճանը 2002-2021 թթ., %



Աղբյուր՝ Համաշխարհային բանկի տվյալների բազա (World Development Indicators)

Ինչպես նկատում ենք գծապատկեր 1-ից, 2002-2021 թթ. ՀՀ տնտեսության բացվածության աստիճանը (արտաքին ապրանքաշրջանառություն/ՀՆԱ, արտահանում/ՀՆԱ, ներմուծում/ՀՆԱ) էական փոփոխություններ չի կրել: Ուսումնասիրելով գծապատկեր 1-ի տվյալները՝ տեսնում ենք, որ ՀՀ տնտեսության բացվածության աստիճանը 2015 թ.-ից հետո ցույց է տվել աճի միտում՝ 2019 թ. գրանցելով առավելագույն ցուցանիշ նշված ժամանակահատվածի համար: Ավելին, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն փոքր երկիր է, իսկ նման երկրները սովորաբար համաշխարհային տնտեսության մեջ ունեն ավելի մեծ տնտեսական բացվածության աստիճան, ապա կարող ենք փաստել, որ ժա-


⁸ Հոդվածում բերված տվյալների համար, եթե այլ աղբյուր նշված չէ, հիմք են ընդունվել ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումները:

մանակի ընթացքում, տնտեսական զարգացմանը զուգընթաց, աճելու է նաև ՀՀ տնտեսության բացվածության աստիճանը:

Անդրադառնալով ՀՀ արտաքին առևտրին՝ կարող ենք փաստել, որ նշված ժամանակահատվածում դրան բնորոշ է եղել բացասական առևտրային հաշվեկշիռը, որի առավելագույն արժեքը գրանցվել է 2022 թ.՝ կազմելով 3.4 մլրդ դոլար (գծապատկեր 2):

Գծապատկեր 2

ՀՀ արտաքին առևտուրը 2002-2022 թթ., մլրդ դոլար



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, ժամանակագրական շարքեր

ՀՀ արտաքին առևտրի մյուս առանձնահատկությունն այն է, որ ՀՀ արտահանման կառուցվածքում բավականին մեծ է հանքահումքային ապրանքների տեսակարար կշիռը: Այսպես, 2020 թ. տվյալներով դրանք կազմել են ամբողջ արտահանման 38%-ը: 2002-2022 թթ. արտաքին առևտրի ծավալները զգալիորեն աճել են. արտահանումը՝ մոտ 18, իսկ ներմուծումը՝ մոտ 10 անգամ: Քանի որ ՀՀ-ն փոքր զարգացող երկիր է, ապա կարող ենք փաստել՝ բոլոր գլոբալ և տարածաշրջանային ֆինանսատնտեսական ու ոչ տնտեսական ճգնաժամերը լուրջ ազեցություն են ունեցել ՀՀ արտաքին առևտրի ծավալների վրա (2009 թ. գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամ, 2014-2015 թթ.՝ ՌԴ արժուրթաֆինանսական ճգնաժամ, 2020 թ.՝ COVID համավարակ):

Այժմ փորձենք վերլուծել և ներկայացնել ՀՀ արտաքին առևտուրը ԵԱՏՄ անդամ երկրների հետ 2015 թ.-ից հետո: ՀՀ տնտեսության հետագա զարգացումն ապահովելու համար շատ կարևոր է հասկանալ, թե ինչպիսի դինամիկա ունի ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ արտաքին առևտուրը: Փաստենք, որ դրա ծավալները ՀՀ ընդհանուր առևտրում միշտ նշանակալի են եղել՝ 2002-2022 թթ.՝ ՀՀ արտահանման միջինը՝ 22% և ներմուծման միջինը՝ 28%: Առավելագույնը գրանցվել է 2022 թ. (արտահա-

նում՝ 47% և ներմուծում՝ 31%): Ընդհանուր առմամբ, նշված ժամանակաշրջանում ՀՀ արտահանման ծավալը դեպի ԵԱՏՄ երկրներ աճել է մոտ 39 անգամ, իսկ ներմուծումը՝ 14 անգամ, ինչը գերազանցում է այդ ցուցանիշների աճին (արտահանում՝ 18 անգամ, ներմուծում՝ 10): ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ արտաքին առևտրի առանձնահատկությունը այն է, որ դրա աշխարհագրությունը բավականին կենտրոնացված է. մոտ 96%-ը բաժին է ընկնում ՌԴ-ին, 3%-ը՝ Բելառուսին, և 1%-ը՝ Ղազախստանին: Մյուս կողմից սա բնորոշ է ԵԱՏՄ ներտարածաշրջանային առևտրի մասնակից բոլոր երկրներին: Քանի որ ժամանակի ընթացքում ԵԱՏՄ մասնակից երկրների տնտեսությունների կառուցվածքային տարբերությունները պետք է կրճատվեն, և նրանց միջև պետք է աճի կոպերացիան, ապա կարող ենք փաստել, որ ԵԱՏՄ շրջանակներում ներտարածաշրջանային առևտրի ծավալները նկատելիորեն կաճեն:

Ուսումնասիրելով ՀՀ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը ԵԱՏՄ անդամ երկրների հետ՝ կարող ենք առանձնացնել մի քանի ապրանքախմբեր, որոնք նշանակալի են: Այսպես, ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ ապրանքախումբը կազմում է դեպի ՌԴ արտահանման 26%-ը, Բելառուս՝ 63%-ը և Ղազախստան՝ 44%-ը: Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ ապրանքախմբին բաժին է ընկնում դեպի ՌԴ արտահանման 10%-ը, Բելառուս՝ 7%-ը և Ղազախստան՝ 23%-ը: Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ ՀՀ-ն արտահանում է ավելի մեծ հավելյալ արժեք ունեցող ապրանքներ, քան այլ ուղղություններով: ԵԱՏՄ երկրներից դեպի ՀՀ ներմուծման մեջ գերակշռող ապրանքախմբերն են՝ հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք (ՌԴ-ից՝ 38%), կաթ և կաթնամթերք, թոչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք (Բելառուսից՝ 27%), էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ (Ղազախստանից՝ 41%):

Հարկ է նաև նշել, որ ԵԱՏՄ շրջանակներում սկսվել է անդամ երկրների ծառայությունների շուկայի ազատականացումը⁹: Սա լրացուցիչ հնարավորություն կարող է ստեղծել ՀՀ տնտեսության զարգացման համար, քանի որ ՀՀ ծառայությունների ոլորտի միջազգային առևտուրը բավականին զարգացած է¹⁰: Այսպիսով կարող ենք փաստել, որ ԵԱՏՄ շրջանակում ծառայությունների ոլորտի ազատականացումը կնպաստի ՀՀ ծառայությունների ոլորտի մրցունակության ավելացմանը և տնտեսության հետագա զարգացմանը:

2022 թ. իրադարձությունները (ռազմական հատուկ գործողությունը Ուկրաինայում, ՌԴ նկատմամբ կիրառվող տնտեսական պատժա-

⁹ Տե՛ս Եվրասիական տնտեսական հանձնաժողով
<https://eec.eaunion.org/news/edinyy-rynok-uslug-eaes-rasshiraetsya> (մուտք՝ 04.09.2023):

¹⁰ Տե՛ս **Айрапетян В. Л., Айрапетян Г. Р.** Международная торговля услугами: перспективы и вызовы для Армении. Пятнадцатая годовичная научная конференция (6–10 декабря 2021 г.): Сборник научных статей: Гуманитарные и общественные науки: Т. II. Ер.: Изд-во РАУ, 2022. – էջ 9-19:

միջոցները) չէին կարող ազդեցություն չունենալ մեր տնտեսության վրա, քանի որ ՀՀ-ն համարվում է ԵԱՏՄ անդամ, իսկ ՌԴ-ն՝ գլխավոր առևտրային գործընկեր երկրներից մեկը: Այսպես, 2021 թ. տվյալներով՝ ՀՀ արտաքին առևտրի 31%-ը և դեպի ՀՀ դրամական փոխանցումների 53%-ը բաժին էին ընկնում ՌԴ-ին: Բազմաթիվ մասնագետներ կանխատեսումներ էին կատարում, որ 2022 թ. ակնկալվում են զգալի բացասական երևույթներ ինչպես երկկողմանի արտաքին տնտեսական հարաբերություններում, այնպես էլ ՀՀ տնտեսության համար ընդհանրապես: Սակայն, ինչպես պարզեցինք, 2022 թ. ՀՀ արտաքին առևտուրը ՌԴ-ի հետ աննախադեպ աճ է գրանցել: Միննույն ժամանակ կարող ենք փաստել, որ միակ բացական երևույթը ՀՀ տնտեսության համար ՀՀ դրամի արժևորումն է, ինչը պայմանավորված է չափից ավելի արտարժույթի ներհոսքով դեպի ՀՀ տնտեսություն, և սա լրացուցիչ դժվարություններ է ստեղծում հայ արտահանողների համար:

Եզրակացություն

Ամփոփելով կարող ենք նշել, որ չնայած բոլոր բարդություններին՝ ՀՀ արտաքին առևտուրը ԵԱՏՄ երկրների հետ զարգանում է: ՀՀ արտադրողները կարող են օգտագործել ՌԴ-ից բացի նաև ԵԱՏՄ մյուս երկրների ներուժը, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ ՀՀ-ն արտահանում է ավելի մեծ հավելյալ արժեք ունեցող ապրանքներ, քան այլ երկրներ և տարածաշրջաններ: Եվրասիական տնտեսական միության միասնական սակագնային քաղաքականությունը լրացուցիչ հնարավորություն կստեղծի ՀՀ տեղական արտադրության զարգացման համար: Ավելին, դրան կնպաստի նաև ժամանակի ընթացքում ԵԱՏՄ անդամ երկրների ընկերությունների հետ կոոպերացումը: ՀՀ-ում տեղական արտադրության զարգացումը (հատկապես վերամշակող արդյունաբերության ոլորտում) և հետագա արտահանման հնարավորությունները ՀՀ տնտեսության երկարաժամկետ զարգացման համար շատ լավ նախադրյալներ կարող են դառնալ:

ГРИГОР АЙРАПЕТЯН – Анализ внешней торговли Республики Армения в рамках ЕАЭС. – За последние два десятилетия роль и значение региональных экономических интеграционных группировок в мировой экономике существенно возросли. Начиная с 2015г. Республика Армения является участницей Евразийского экономического союза и применяет единые таможенные тарифы ЕАЭС во внешней торговле. В статье были представлены особенности внешней торговли Армении в целом и в рамках ЕАЭС. В частности, было обосновано, что применение единых таможенных тарифов ЕАЭС будет способствовать развитию местного производства в Армении, подчеркнута необходимость расширения сотрудничества между компаниями стран-членов ЕАЭС, а также выявлено, что РА экспортирует в страны ЕАЭС продукцию с большей добавленной стоимостью, чем в другие страны и регионы мира. Либерализация рынка услуг в рамках ЕАЭС может создать дополнительные возможности для развития экономики РА, поскольку международная торговля услугами в РА достаточно развита, это приведет к повыше-

нию конкурентоспособности сферы услуг в РА. В ходе анализа выявлено, что, несмотря на все сложности, внешняя торговля РА со странами ЕАЭС развивается, а членство в ЕАЭС может обеспечить стабильный экономический рост экономики РА в долгосрочной перспективе.

Ключевые слова: экспорт, импорт, международная торговля, международная торговля услугами, ЕАЭС, торговый баланс, региональная экономическая интеграция

GRIGOR HAYRAPETYAN – Analysis of the Republic of Armenia’s foreign trade at the framework of EAEU. – Over the past two decades, the role and importance of regional economic integration groupings in the world economy has increased. Starting from 2015 the Republic of Armenia is a member of the EAEU and applies the common customs tariffs of the EAEU in foreign trade. In the article the features of Armenia's foreign trade in general and within the framework of the EAEU are presented. In particular, it was substantiated that the application of the common customs tariffs of the EAEU would contribute to the development of local production in Armenia, the need for cooperation between companies of the EAEU member countries was emphasized, and it was also revealed that the Republic of Armenia exports products to the EAEU countries with greater added value than to other countries and regions. Liberalization of the services market within the EAEU can create additional opportunities for the development of the RA’s economy, since international trade in services in the RA is quite developed, this will increase competitiveness of the service sector in the RA. The analysis revealed that, despite all the difficulties, the foreign trade of the Republic of Armenia with the EAEU countries is developing, and membership in the EAEU can ensure stable economic growth of the RA economy in the long term.

Key words: export, import, international trade, international trade in services, EAEU, trade balance, regional economic integration

**ՀՀ-ՈՒՄ ԹՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

ԱՐԱ ՔԱՈՅԱՆ, ՎԼԱԴԻՄԻՐ ՔԱՈՅԱՆ

Հոդվածում ներկայացվել են ՀՀ-ում թվային տեխնոլոգիական ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների անցումային փորձարարական հարթակի (Sandbox) ներդրման անհրաժեշտությունը, նպատակը, խնդիրներն ու լուծումները: Ֆինտեխի (Fintech) շատ տարողունակ և լայն մեկնաբանությունների հիման վրա առաջարկվել է այն բնութագրել հայտանիշների համախմբով՝ որպես բարդ կատեգորիա:

Առաջարկվել են թվային տեխնոլոգիական ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների անցումային փորձարարական հարթակը կանոնակարգող իրավական ակտի կառուցվածքը և դրա առանցքային բաղադրիչները, հատկապես՝ ա) «անցումային փորձարարական հարթակի» նպատակները, բ) թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման ու վերահսկման նպատակով փորձարկելու և գործարկելու կառուցակարգերը, գ) կարգավորման գործելակարգի կիրարկման չափորոշիչները, դ) ֆինտեխ պրոդուկտներն ու ծառայությունները շահառու հաճախորդներին մատուցելու կարգը, ե) ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների շարքում ընդգրկելու համար կազմակերպական և տեխնիկական պահանջները, զ) փորձարկվող թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների թեստավորման հաշվետվությունների կանոնակարգը, է) թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման ու վերահսկման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևաչափը: Կարգավորող «Անցումային փորձարարական հարթակի» ներդրումը կնպաստի նվազեցնելու սպասվող կարգավորիչ անորոշությունները և պարզաբանելու կարգավորող ու վերահսկիչ գործառույթների կիրարկման խնդիրները:

Բանալի բառեր – *ֆինտեխ, թվային ֆինանսական պրոդուկտների և ծառայությունների իրավական կարգավորում, «անցումային փորձարարական հարթակ» (Sandbox), ֆինտեխ կարգավորիչ գործելակարգեր, կարգավորման տեխնոլոգիաները (RegTech), վերահսկողական տեխնոլոգիաները (SupTech), ֆինանսների ապակենտրոնացված կառավարման ձևաչափը (DeFi)*

Ներածություն

Ֆինտեխ (Fintech) բառացի նշանակում է «ֆինանսներ» գումարած «տեխնոլոգիաներ»: Այն մասնագիտական գրականության մեջ ունի

շատ տարողունակ և լայն մեկնաբանություններ¹: Ուստի այն՝ որպես բարդ կատեգորիա, նպատակահարմար է բնութագրել հայտանիշների համախմբով, որոնցում հարկ է առանձնացնել՝

- ✓ նորարարական գործընթացների արդյունքով ձևավորվող ծառայություններն ու պրոդուկտները,
- ✓ նոր արժեք և բիզնես կայուն մոդելներ ստեղծելու կարողությունը,
- ✓ ֆինանսների ապակենտրոնացված կազմակերպման և կառավարման ձևաչափը (DeFi),
- ✓ տեղեկատվության դրամայնացման կարողությունը,
- ✓ նորարարության, հաճախորդների փորձի (վարքագծի) յուրացման և 24/7 գործելակարգի առերևույթ դրսևորումները,
- ✓ ակտիվ հաճախորդների ներառականություն ապահովելու կարողությունը,
- ✓ դրսևորման ձևաչափը արտահայտվում է ֆինանսական պրոդուկտի, ֆինանսական գործակալության, ինչպես նաև տեխնոլոգիական ֆինանսական կազմակերպության ձևով (վերջինս դասական ֆինանսական միջնորդ չէ):

Ֆինտեխը ունակ է նաև փոխակերպելու կայացած ինստիտուտները, մասնավորապես՝ ֆինանսական կարգավորումն ու վերահսկողությունը՝ նպաստելով կարգավորման տեխնոլոգիաների (RegTech) և վերահսկողական տեխնոլոգիաների (SupTech) ի հայտ գալուն:

Արագ տեմպերով իրականացվող թվայնացումը և ֆինանսական ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրումը վերջին տարիներին վերափոխել են ֆինանսական ծառայությունների ամբողջ համայնապատկերը և լանդշաֆտը: Դրանք մարտահրավեր են նետել կարգավորող ինստիտուցիոնալ մարմիններին, որոնք, արձագանքելով դրան, ընդունել են ֆինտեխի խրախուսմանը համարժեք կարգավորող նախաձեռնություններ՝ միաժամանակ դրանցում ներառելով ռիսկերի գապման կանոնակարգումներ:

Թվային տեխնոլոգիական զարգացումները, նորարարական պրոդուկտների չկարգավորվող տարածումը հղի են մտահոգություններով և ռիսկերով, ինչպիսիք են մրցակցային հավասար պայմանների խեղաթյուրումը և մեծ թվով սպառողների շահերի պաշտպանության ու ֆինանսական կայունության խաթարումը:

¹ Տե՛ս **Jorge Tello-Gamarra, Diogo Campos-Teixeira, André Andrade Longaray, João Reis and Martin Hernani-Merino**, Fintechs and Institutions: A Systematic Literature Review and Future Research Agenda, <https://www.mdpi.com/0718-1876/17/2/38> ; **Liudmila Zavolokina, Mateusz Dolata, Gerhard Schwabe**, FinTech – What’s in a Name? University of Zurich, https://www.researchgate.net/publication/318268448_FinTech_-_What's_in_a_Name: **Tadiwanashe Muganyi , Linnan Yan , Yingkai Yin , Huaping Sun, Xiangbin Gong and Farhad Taghizadeh Hesary**, Fintech, regtech, and financial development: evidence from China https://web.archive.org/web/20220421235443id_/https://jfinswufe.springeropen.com/track/pdf/10.1186/s40854-021-00313-6.pdf

Միջազգային պրակտիկայում թվային տեխնոլոգիական ֆինանսական պրոդուկտների և ծառայությունների կարգավորման նպատակով ներդրվել ու գործարկվել են փորձարարական հարթակներ (անգլերեն՝ «Sandbox», ռուսերեն՝ «Регулятивная песочница»), որոնք ունեն ընդհանուր չափորոշիչներ և բնութագրիչներ: Դրանք են՝ պրոդուկտների և ծառայությունների նորարարական բնույթը, գործող օրենսդրական կարգավորման սահմանափակումները և կամ բացակայությունը: Վերջիններս խոչընդոտում են նորարարության իրականացումը՝ մի կողմից զրկելով սպառողներին առավելություններից և մյուս կողմից՝ հարուցելով անվտանգային տարբեր խնդիրներ:

Փորձարարական հարթակը՝ «Sandbox»-ը, համարվում է ֆինտեխ նորարարությունների ազդեցությունները փորձարկելու և ուսումնասիրելու հարմար միջավայր: Առաջին անգամ այն գործարկվել է 2015 թ. Մեծ Բրիտանիայում: Այդ երկրի ֆինանսական ոլորտը կարգավորող մարմինը (FCA) այն բնորոշել է որպես «անվտանգ տարածք, որտեղ բիզնեսը կարող է փորձարկել նորարարական պրոդուկտները, ծառայությունները, բիզնես մոդելները և մատուցման մեխանիզմները՝ առանց անմիջապես ներգրավելու դրանք այդ գործունեության բոլոր կարգավորիչ նորմերի տակ»²: Ըստ այդ մարմնի՝ փորձարարական հարթակը ունի երեք հիմնական նպատակ. 1) կրճատել շուկա մուտք գործելու ժամանակը, 2) բարելավել ֆինանսական հասանելիությունը և 3) խրախուսել նորարարությունները:

«Sandbox»-ը արդեն կիրառվում է շուրջ 60 երկրներում՝ հիմնականում երկու ձևաչափով՝ ա) ֆինանսական ոլորտի հատուկ անցումային փորձարարական կանոնակարգող հարթակ («Sandbox») և բ) առավել լայն շրջանակով հարթակ, ներառյալ ֆինանսական ոլորտը: Առաջինի օրինակ է Ջամայկայի կենտրոնական բանկի կարգավորվող հարթակը³, իսկ երկրորդինի՝ Ավստրալիայի կառավարության 2020 թ. սեպտեմբերի 1-ից ներմուծած «Sandbox»-ի ընդլայնված կարգավորիչ սխեման⁴: Վերջինս բոլոր անձանց թույլ է տալիս փորձարկել նորարարական ֆինանսական որոշակի ծառայություններ՝ առանց նախապես ստանալու Ավստրալիայի ֆինանսական ծառայությունների (AFS) մարմնի լիցենզիան:

Հաշվի առնելով ՀՀ-ում գոյություն ունեցող ֆինտեխ էկոհամակարգի հասունության մակարդակը, ֆինտեխի զարգացման առաջնահերթությունը և հիմնվելով միջազգային փորձի վրա՝ առաջարկվում է Հա-

² See u **Douglas W. Arner, Janos Nathan Barberis, Ross Buckley**, FinTech and RegTech in a Nutshell, and the Future in a Sandbox, էջ 22-23, <https://www.cfainstitute.org/-/media/documents/article/af-brief/rfbr-v3-n4-1.pdf>

³ See u **FINTECH REGULATORY SANDBOX GUIDELINES Bank of Jamaica**, 2 March 2020, https://www.boj.org.jm/uploads/news/bank_of_jamaica_fintech_regulatory_sandbox_guidelines_2_march_2020.pdf

⁴ See u **ASIC**, Enhanced regulatory sandbox, <https://asic.gov.au/for-business/innovationhub/enhanced-regulatory-sandbox/>

յաստանում ներդնել ֆինտեխ ծառայությունների և պրոդուկտների մատուցման և վերահսկման կանոնակարգում ըստ «Անցումային փորձարարական հարթակի» (այսուհետև՝ նաև հարթակ) ձևաչափի, որը կընդգրկի ֆինանսական ոլորտը:

Դա մեզ մոտ առավել դյուրին կստացվի, քանի որ, ի տարբերություն շատ երկրների, որտեղ առկա են ֆինանսական ոլորտը կարգավորող տարբեր մարմիններ, ՀՀ-ում դրա միասնական մեզակարգավորողն է ՀՀ կենտրոնական բանկը (2005 թ. օրենքով), և ֆինանսական ծառայությունների միջգերատեսչական համակարգման խնդիր չկա: Նման փորձ առկա է նաև Վրաստանում⁵, Հունգարիայում, Դրոգաստանում, որտեղ կարգավորող փորձարարական հարթակի ձևաչափը կիրառվում է միայն ֆինտեխի համար, և այն կարգավորվում է ազգային բանկերի կողմից:

ՌԴ-ում փորձարարական ռեժիմները նախատեսվում են գործունեության տարբեր ոլորտներում, ուստի դրանք կառավարում և կարգավորում են տվյալ ոլորտը կարգավորող տարբեր մարմիններ՝ կախված թվային տեխնոլոգիական նորարարության բնույթից: Ֆինտեխ նորարարությունները գործարկվում և կարգավորվում են բացառապես Ռուսաստանի բանկի «Անցումային փորձարարական հարթակի» միջոցով: Մինչդեռ գործունեության այլ ոլորտների համար նախատեսված «անցումային փորձարարական հարթակները» կարգավորում են ճյուղային գերատեսչությունները⁶:

ՀՀ-ում «Անցումային փորձարարական հարթակի» ներդրման գործընթացի կազմակերպական և իրավական ապահովումը:

Իրավական առումով «Անցումային փորձարարական հարթակի» ինստիտուտը ՀՀ-ում կարող է սահմանվել ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Նպատակահարմար է ընդունել «ՀՀ-ում բանկերի, ֆինանսական և S2S կազմակերպությունների կողմից թվային տեխնոլոգիական ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման և վերահսկման անցումային դրույթներ» անվանումով կանոնակարգ:

Կանոնակարգի կառուցվածքը պետք է ներառի առանցքային հետևյալ բաժինները. 1) «Անցումային փորձարարական հարթակի» նպատակները, 2) թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման և վերահսկման նպատակով փորձարկման (թեստավորման) և գործարկման կառուցակարգերը, 3) կարգավորման գործելակարգի կիրարկման չափորոշիչները, 4) ֆինտեխ պրոդուկտներն ու ծառայությունները շահառու հաճախորդներին մատուցելու կարգը, 5) ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների շարքում

⁵ Տե՛ս NBG, Regulatory laboratory, <https://nbg.gov.ge/en/page/regulatory-laboratory>

⁶ Տե՛ս Vladislav Makarov, Experimental legal regimes (regulatory sandboxes): Russian and foreign practices Volgograd State University, Russia, <https://ojs.uniquindio.edu.co › article › download>

ընդգրկվելու համար կազմակերպական և տեխնիկական պահանջները, 6) փորձարկվող թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների թեստավորման հաշվետվությունների կանոնակարգը, 7) թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման ու վերահսկման արդյունքների վերաբերյալ եզրակացությունը: Նման նորմերի անհրաժեշտության մասին են վկայում տարբեր երկրներում «Անցումային փորձարարական հարթակների» վերաբերյալ մասնագիտական հրապարակումները, որոնցում ներկայացված են հայտավորումը, հայտի փոփոխման կամ վերանայման հնարավորությունը, փորձարկման կարգավորումները, մոնիտորինգը և արդյունավետության գնահատումը, փորձարկման ավարտի արձանագրումը⁷:

Առաջարկվող կանոնակարգումը, ըստ անվանման, ներառում է ֆինտեխ ոլորտում բանկերի և ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև տեղեկատվական հեռահաղորդակցության տեխնոլոգիական (ՏՀՏ) կազմակերպությունների՝ ֆինտեխ ծառայություններ և պրոդուկտներ մատուցելու նախաձեռնությունները: Կանոնակարգման առանցքային բաղադրիչը «Անցումային փորձարարական հարթակի» գործառույթներն են: Հարթակի արդյունավետության համար խիստ կարևոր է նրա նպատակների արձանագրումը⁸: Որպես այդպիսին հարկ է սահմանել.

ա) արագ զարգացող թվային տեխնոլոգիաների միջոցով ստեղծված նորարարական թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների փորձարկում՝ թույլ չտալով ՀՀ օրենսդրության խախտումների և համակարգային հնարավոր ռիսկերի առաջացում, վերջնական նպատակ ունենալ՝ դրանց կարգավորումը համապատասխանեցնելու ՀՀ օրենսդրության և ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական պահանջներին,

բ) նորարարական թվային ֆինանսական ծառայությունների հնարավոր ռիսկերի վերլուծություն ու գնահատում և դրանց նվազեցմանն ու կանխարգելմանը ուղղված համարժեք մոտեցումների մշակում,

գ) փորձարկվող նորարարական թվային ծառայությունների և պրոդուկտների զարգացումը խթանելու նպատակով ֆինանսական նոր կարգավորիչ պահանջների բացահայտում,

դ) նորարարական թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների ներդրման ու կիրարկման համար օրենսդրական ֆինանսա-

⁷ St' u Global Experiences from Regulatory Sandboxes, WB, էջ 16-24, <https://documents1.worldbank.org/curated/en/912001605241080935/pdf/Global-Experiences-from-Regulatory-Sandboxes.pdf>: **Radostina PARENTI**, Regulatory Sandboxes and Innovation Hubs for FinTech. Impact on innovation, financial stability and supervisory convergence, European Parliament, Policy Department for Economic, Scientific and Quality of Life Policies, էջ 28-42, [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2020/652752/IPOL_STU\(2020\)652752_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2020/652752/IPOL_STU(2020)652752_EN.pdf)

⁸ St' u **Ivo Jenik and Schan Duff** HOW TO BUILD A REGULATORY SANDBOX, A Practical Guide for Policy Makers, September 2020, էջ 4-12, <https://documents1.worldbank.org/curated/en/126281625136122935/pdf/How-to-Build-a-Regulatory-Sandbox-A-Practical-Guide-for-Policy-Makers.pdf>

կան կարգավորումների կայացման նպատակահարմարության որոշում:

Հարթակի արդյունավետ գործարկման համար մյուս կարևոր նախապայմանը թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների մատուցման ու վերահսկման նպատակով փորձարկման (թեստավորման) և գործարկման կառուցակարգերն են⁹:

Հարթակում թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների թեստավորում իրականացնելու համար հայցորդ ընկերությունը (այսուհետև՝ հայցորդ, ի դեմս բանկերի, ֆինանսական և S2S կազմակերպությունների) պետք է ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնի՝ ա) դիմում, բ) թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների թեստավորման ծրագիրը (այսուհետև՝ նաև Ծրագիր), գ) թվային ֆինանսական ծառայություններ ու պրոդուկտներ մատուցող ընկերության հրապարակային և կամ առանձին շահառուների համար նախատեսված օֆերտայի տեքստի բովանդակությունը:

Թվային ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների թեստավորման Ծրագիրը պետք է պարունակի՝

- ✓ պրոդուկտի կամ ծառայության ոլորտը, տեսակը և նկարագիրը,
 - ✓ պրոդուկտի կամ ծառայության հնարավոր շահառուներին, ըստ անհրաժեշտության դրանց ընդգրկման սահմանափակումները,
 - ✓ պրոդուկտի կամ ծառայության ստեղծման, գործարկման և/կամ շահագործման մեջ ներգրավված գործընկեր կազմակերպությունը (ներքև) և նրան պատվիրակված գործառույթները և կամ համատեղ իրականացվող գործառույթներն ու ըստ գործընկերների դրանց բաժանումը,
 - ✓ գործընկեր կազմակերպության(-ների) ընտրության չափորոշիչները,
 - ✓ պրոդուկտի կամ ծառայության գործարկումից հետո դրա գնահատելի ծավալները,
 - ✓ պրոդուկտի կամ ծառայության հնարավոր ռիսկերի տեսակները, նկարագրությունը և գնահատելի միջակայքը և թույլատրելիության վերին սահմանագիծը,
 - ✓ պրոդուկտի կամ ծառայության թեստավորման պարամետրերը և դրանց մոնիթորինգի ձևաչափերն ու կառուցակարգերը՝ փորձարկող ընկերության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից (ներառյալ օնլայն ձևաչափերը),
 - ✓ սույն կանոնակարգով «ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Client -KYC), «ճանաչիր քո տվյալները» (Know Your Data - KYD) և փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման՝ ՓԼՄԻ-ի համար նախատեսված գործելակարգերի նախընտրելի համախումբը:
- Ծրագրի կառուցվածքը և առանձնահատկությունները կախված են թվային ֆինանսական պրոդուկտի և ծառայության ոլորտից և ուղղությունից:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 12-20:

Ֆինտեխ ծառայությունները և պրոդուկտները հարթակում ներգրավվելու համար հայցորդի ներկայացրած ծրագիրը պետք է հավանության արժանանա ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Այդ հավանության դեպքում կսահմանվեն դրա իրականացման փուլերն ու ժամկետները, որի ամբողջական ժամկետը չի կարող փոքր լինել 1 ամսից և չի կարող գերազանցել 3 տարին:

Հարթակում մատուցվող ծառայությունների, պրոդուկտների և դրանց մատակարարների նկատմամբ պետք է կիրարկվի վերահսկման ճկուն՝ հարմարեցվող գործելակարգ, այն է՝ ֆինանսական ոլորտի գործող օրենսդրական կարգավորումների կիրառումը իրականացվում է ժամանակավոր՝ փորձնական ընթացակարգով՝ հարմարեցվելով հայցորդի՝ ա) բանկերի, բ) S2S տեխնոլոգիական ընկերությունների, գ) ֆինանսական կազմակերպությունների (ներառյալ՝ ապահովագրական, վարկային և այլ ֆինանսական կազմակերպությունների) առաջարկած և ՀՀ կենտրոնական բանկի հետ համաձայնեցված ֆինտեխ առանձին պրոդուկտների ու ծառայությունների կիրարկման համար սահմանվող փորձարարական կարգավորումներին:

Ֆինտեխ ծառայությունների և պրոդուկտների փորձարարական ճկուն՝ հարմարեցվող կարգավորման գործելակարգը պետք է նախատեսի՝

ա) ծրագրի իրականացման փուլերի տարանջատում և հայցորդ ընկերության կողմից նախանշած միջոցառումների ամրագրում՝ որակական և/կամ քանակական պարամետրերով,

բ) ՀՀ կենտրոնական բանկի հետ համաձայնեցված կարգով հաստատված ծրագրի փոփոխությունների իրականացում:

Հարթակի կարգավորման գործելակարգի կիրարկումը պահանջում է ամրագրել նաև նրա չափորոշիչները: Ճկուն «Անցումային փորձարարական հարթակի» կարգավորման գործելակարգի կիրարկումը ՀՀ կենտրոնական բանկի կողմից պետք է լինի հայեցողական, մասնավորապես՝ այն հնարավոր է իրականացնել՝

ա) նոր մատուցվող ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների գործառնությունների համար, որոնք գերծ են որևէ կանոնակարգումից,

բ) ՀՀ օրենսդրության շրջանակում՝ կիրառվող կարգավորման որոշակի ընթացակարգերի բացակայության դեպքում,

գ) որոշակի գործունեության և թվային ձևաչափով մոդիֆիկացված ֆինանսական գործառնությունների համար, որոնց նախատիպերի նկատմամբ սահմանված կարգավորող նորմերը (ներառյալ՝ դրանց սահմանվող բացառությունները և կամ որոշակի սահմանափակող շեմերը) չեն դիտարկում այդ գործառնությունների թվային նորարարական մոդիֆիկացված համատեքստը և առանձնահատկությունները,

ե) ՀՀ կենտրոնական բանկի դիրքորոշման համաձայն՝ կարգավորումներին վերաբերող այլ հիմնավոր պատճառներով, մասնավորա-

պես՝ կարգավորող նորմերի հարմարեցումը ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական գործելակերպին, ներառյալ՝ «առարկությունների բացակայության» ընթացակարգի կիրարկման ճշգրտումը:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների առաջարկությունները «Անցումային փորձարարական հարթակում» թեստավորման ընդունման չափորոշիչ է ՀՀ-ում ֆինտեխ ծառայությունների զարգացումը՝ ուղղված՝ ա) ֆինանսական շուկայում թվային տեխնոլոգիական ֆինանսական պրոդուկտների հիմքով առողջ մրցակցության ծավալմանը, բ) հաճախորդների համար թվային ֆինանսական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացմանը, գ) նորարարական հիմքով ծառայությունների տեսականու ընդլայնմանը, դ) թվային ֆինանսական տեխնոլոգիական ծառայությունների ծախսատարության և սակագների նվազեցմանը, ե) ֆինանսական ծառայությունների հատվածում ռիսկերի նվազեցմանը, զ) ոլորտի անվտանգության և կայունության ապահովմանը, է) հայկական ֆինտեխ ծառայությունների մրցունակության մակարդակի բարձրացմանը:

«Անցումային փորձարարական հարթակը» չի ենթադրում կարգավորիչ պահանջների բացակայություն և կամ չկիրառում:

Մասնավորապես՝ այն դեպքում, երբ S2S տեխնոլոգիական ընկերությունը նախատեսում է իրականացնել ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների մատուցում, ապա այն կարող է իրականացնել ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան թույլտվության հիմքով:

Նախքան նման գործունեության իրականացումը S2S տեխնոլոգիական ընկերությունը պետք է ստանա ժամանակավոր, սահմանափակ ֆինտեխ գործառնությունների իրականացման լիցենզիա՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված դյուրին, պարզեցված և կարճ ընթացակարգով:

Բանկերի կողմից ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների ստեղծման և շահագործման պատվիրակում ստացած և կամ գործընկերային մասնակցություն ունեցող S2S ընկերությունները, համաձայն ՀՀ օրենսդրության, գտնվում են ՀՀ կենտրոնական բանկի կարգավորման և վերահսկողության ներքո, և նրանց վրա մասնավորապես պետք է տարածվեն առաջարկվող կանոնակարգի նորմերը:

Բանկերը և լիցենզավորված ֆինանսական կազմակերպությունները ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների թեստավորման համար՝ որպես հայցորդ ընկերություններ ՀՀ կենտրոնական բանկի դրական եզրակացության դեպքում կստանան թույլտվություն՝ «Անցումային փորձարարական հարթակում» իրականացնելու իրենց կողմից ներկայացված ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների մատուցումն ու փորձարկումը: Հատուկ շեշտվում է թույլտվություն և ոչ թե լիցենզիա, քանի որ լիցենզիան ենթադրում է թղթակցություն օրենսդրության այլ

կարգավորումների և պահանջների հետ, մասնավորապես՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, տուրքի սահմանման և այլնի հետ:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից նորարարական թվային ֆինտեխ պրոդուկտները և ծառայությունները հարթակում մատուցելու և թեստավորում անցնելու ընտրության չափորոշիչներ պետք է դիտարկվեն նման պրոդուկտներում՝ «մեծ տվյալների» (Big Data), «արհեստական բանականության» (Artificial Intelligence), «մեքենայական ուսուցման» (Machine Learning), «ամպային հաշվարկների տեխնոլոգիաների» (ներառյալ՝ սերվերները, պահեստավորումը, տվյալների բազաները, վերլուծության ու հետազոտության ծրագրակազմը - Cloud computing technologies), «անփոխարինելի կամ եզակի թվային միավորների» (Non-fungible token NFT), «բլոկչեյն տեխնոլոգիաների» (blockchain technologies), «բլոկչեյնում բաշխված գրանցամատյանների» (Distributed Ledger Technology - DLT), «խելացի գործարքների» (Smart contract), «իրերի համացանցի կամ բանցանցի» (Internet of Things - IoT), «ինտերֆեյսը միացնող՝ ծրագրային ապահովման կցորդի» (Application Programming Interface - API), «կարճ հեռավորության վրա անլար կապի» (Near Field Communication technology NFC), «կենսաչափական թվային տեղեկատվական տեխնոլոգիաների» (Biometrics Digital Information Technology), թվային բաղադրիչների և նմանատիպ գործիքների կիրարկումը:

Վերը նշված թվային բաղադրիչների և գործիքների հետ մեկտեղ՝ թեստավորում անցնելու ընտրության չափորոշիչներ պետք է դիտարկվեն դրանց տարբեր համակցության գործիքակազմով լուծումների արդյունքում ստացվող՝ վճարահաշվարկային սպասարկումների (Billing services), թվային ֆինանսական ակտիվների (Digital financial assets), անձանց և տվյալների նույնականացման և ստուգման (Identification and verification persons and data), գաղտնագրման (cryptography), «ռոբոտացված ռեժիմով ներդրումների» (Robotic stocks and investments), «միահավասարների վարկավորման» (Peer to Peer lending), քրաուդֆանդինգի տարբեր ձևաչափերի (Different type of Crowdfunding) և թվային նորարարական այլ պրոդուկտների կիրարկումը:

Բացի վերը նշվածներից, հայցորդ ընկերությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ կարող է համաձայնեցնել «Անցումային փորձարարական հարթակում» թվային այլ բաղադրիչներ և գործիքներ պարունակող նորարարական թվային ֆինտեխ պրոդուկտների և ծառայությունների մատուցումն ու թեստավորումը:

Անցումային փորձարարական հարթակում ֆինտեխ պրոդուկտներն ու ծառայությունները շահառու հաճախորդներին մատուցելու արդյունավետ գործարկումը ենթադրում է որոշակի պահանջների պահպանում: Դրանք հաճախորդներին պետք է մատուցվեն երկու գործելակարգերով.

1) Հաճախորդների գիտությամբ ու համաձայնությամբ՝ նախապես

նրանց իրազեկել բոլոր հնարավոր ռիսկերի մասին (ներառյալ՝ հաճախորդի անձնական տվյալների և առկա և ապագայում ստացված ֆինանսական միջոցների և թվային ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստները):

Գործելակարգը ամրագրվում է շահառու հաճախորդներին ներկայացվող ծառայությունների մատուցման հրապարակային և/կամ առանձին հաճախորդներին տրված օֆերտայում:

2) Հաճախորդների գիտությամբ և համաձայնությամբ՝ նախապես նրանց իրազեկել բոլոր հնարավոր ռիսկերի մասին (ներառյալ՝ հաճախորդի անձնական տվյալների և առկա ու ապագայում ստացված ֆինանսական միջոցների և թվային ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստները) և միաժամանակ վերջիններիս օժտելով փոխհատուցման պահանջի իրավունքով՝ փոխհատուցել կրած կորուստները ամբողջությամբ կամ մասնակի՝ որոշակի շեմից բարձր կամ ցածր:

Գործելակարգը ամրագրվում է շահառու հաճախորդներին ներկայացվող ծառայությունների մատուցման հրապարակային կամ առանձին հաճախորդներին ուղղված օֆերտայում և/կամ վերջիններիս հետ կնքվող պայմանագրում:

Հարթակի գործունակության կարևոր նախապայմաններից է ֆինտեխ պրոդուկտներ և ծառայություններ ընդգրկելու համար սահմանված կազմակերպական և տեխնիկական պահանջները:

«Անցումային փորձարարական հարթակում» ֆինտեխ պրոդուկտներ և ծառայություններ մատուցողները պետք է ՀՀ կենտրոնական բանկի հավանության ներկայացնեն դրանցում կիրարկվող բաց ինտերֆեյսի միացնող՝ կցորդ ծրագրային ապահովման գործիքների («Open API-ների») պարտադիր և հանձնառությամբ ստանձնած պայմանները: Դրանց ստանդարտացված անալոզների առկայության դեպքում նախընտրելի է ստանդարտացված հիմքով «Open API-ների» կիրարկումը:

«Անցումային փորձարարական հարթակում» գործարկվող պրոդուկտները և ծառայությունները պետք է որոշակի ձևաչափով ապահովեն «ճանաչիր քո հաճախորդին» (KYC) և փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման՝ ՓԼԱՖ գործելակարգերի պահանջները՝ ամբողջական և/կամ թեթևացված ընթացակարգով: Դրանց գործարկելիության և աշխատունակության արժանահավատության գնահատումը կիրականացվի ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Դրանք կարող են չկիրարկվել փոքր և որոշակի ժամանակահատվածում (ամսվա կամ տարվա կտրվածքով) գումարային որոշակի շեմը չզերազանցող գործարքների դեպքում: Համապատասխան գումարային սահմանափակումները կորոշի ՀՀ կենտրոնական բանկը:

«Ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer or Client - KYC) և «Ճանաչիր քո տվյալները» (Know Your Data - KYD) կիրառման համար

Ֆինտեխ պրոդուկտ կամ ծառայություն մատուցողը պետք է ներկայացնի ներքոնշյալ գործիքների որոշակի համախումբը, որը կապահովի «ճանաչիր քո հաճախորդին» և «ճանաչիր քո տվյալները» պահանջների կատարումը, դրանց շարքում են.

ա) առցանց միջավայրում «ճանաչիր քո հաճախորդին»-ից օգտվող շահառուի կարգավիճակը ստուգող գործելակարգը կամ ամբողջական համակարգը.

բ) «ճանաչիր քո հաճախորդին» և ՓԼԱՖ-ի ներդրման համապատասխանության էական քայլերը, այդ թվում՝

✓ տվյալների հավաքագրումը, հաճախորդների ստուգումն ու գնահատումը,

✓ տեղեկատվության աղբյուրների բացահայտումը,

✓ հաճախորդի իրավական կարգավիճակի պատշաճ բացահայտումը,

✓ հաճախորդի շարունակական մոնիթորինգը,

✓ «ճանաչիր քո հաճախորդին» տվյալները վերականգնելու կառուցակարգերը,

✓ կարգավորող մարմնի վերահսկման հնարավոր կառուցակարգը:

Ֆինտեխ պրոդուկտներում և ծառայություններում «ամպային հաշվարկների տեխնոլոգիաների» կիրարկման դեպքում «ճանաչիր քո հաճախորդին» և ՓԼԱՖ-ի պահանջները պահպանելու նպատակով դրանք կիրառող հայցողը ընկերությունը պետք է ՀՀ կենտրոնական բանկին ներկայացնի տվյալների բացահայտման, ինչպես նաև դրանց արտահոսքի և կորստի վտանգից խուսափելու համար կիրառվող կանխարգելիչ միջոցները՝ դրանցում կիրառելով ներքոնշյալ գործիքների որոշակի համախումբ՝

✓ տեղեկատվություն ամպային սերվերների տեղաբաշխման վերաբերյալ (տեղաբաշխման երկիրը և տարածաշրջանը),

✓ որակավորված «ամպային տեխնոլոգիաների» մատակարարի (կամ պրովայդերի) ընտրության չափորոշիչները,

✓ տեղեկատվություն որակավորված «ամպային տեխնոլոգիաների» մատակարարի (կամ պրովայդերի) վերաբերյալ,

✓ ամպային միջավայրում զգայուն տվյալների գաղտնագրման գործելակարգը:

Կիրառվող բոլոր գաղտնաբառերի պահպանման գործելակարգերը առավել ապահով վայրում պահպանելու և գաղտնաբառերը փոփոխման ընթացակարգերի համախմբում են՝

✓ բոլոր աշխատակիցների կողմից զգայուն տեղեկատվության (ֆայլերի) հասանելիության թույլտվությունների աստիճանակարգման ընթացակարգը (սահմանված հասանելիության մակարդակները),

✓ վիրուսային վարակիչ ծրագրերին հակազդող գործիքներն ու դրանց կիրարկման ընթացակարգերը,

- ✓ ցանցային գործառնություններին առնչվող սահմանափակումները,
- ✓ համապատասխանության գործելակարգի ապահովումը, ներառյալ՝ պատշաճ իրավական փորձաքննության ընթացակարգը,
- ✓ անընդմեջ մոնիթորինգ իրականացնելու ընթացակարգը:

Հայցորդ ընկերությունը «ճանաչիր քո հաճախորդին» և ՓԼԱՖ-ի խնդիրների գործարկման համար կարող է առաջարկել նաև այլ գործիքներ:

«Ճանաչիր քո հաճախորդին», «ճանաչիր քո տվյալները» և ՓԼԱՖ-ի վերը նշված ու հայցորդի առաջարկած հավելյալ գործիքներով կազմված համախմբի գործարկելիության և աշխատունակության արժանահավատության գնահատումը իրականացնում է ՀՀ կենտրոնական բանկը:

«Անցումային փորձաքննարկման հարթակում» գործարկվող պրոդուկտների և ծառայությունների ճկուն կիրարկումը պայմանավորված է դրանց հատուկ թեստավորման պարամետրերով՝ ներկայացված դրա Ծրագրում: Այդ պարամետրերը որոշվում են յուրաքանչյուր պրոդուկտի համար առանձին և հարմարեցված են այդ գործունեության թեստավորման բնույթին: Մասնավորապես՝ «Անցումային փորձաքննարկման հարթակում» թեստավորվող սուբյեկտները կարող են ենթարկվել սահմանափակումների՝ ըստ սպասարկվող հաճախորդների տեսակների և/կամ դրանց առավելագույն թվաքանակի և/կամ գործարքի ծավալների:

«Անցումային փորձաքննարկման հարթակում» գործարկվող պրոդուկտների և ծառայությունների թեստավորման ողջ ժամանակահատվածում այն իրականացնող ընկերությունը ակտիվորեն պետք է համագործակցի ՀՀ կենտրոնական բանկի հետ՝ նրան տեղեկացնելով փոխհամաձայնեցված Ծրագրի աշխատանքային պլանում արձանագրված շեղումների և դրանց պատճառների մասին, ինչպես նաև առաջիկայում կանխատեսվող շեղումների մասին:

